

ՁԵԿՈՒՅՑ

ՄԵԴԻԱ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏՈՒԳԵԼԻՍ Ա ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼԻՍ



ՄԵԴԻԱ
ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ



Մեդիա և
տեղեկատվական
գրագիտության
աջսերտատոր

Երևան, 2022

Համառոտագիր

Այս հետազոտությունն անցկացվել է հայաստանյան մեդիա աշխատողների շրջանում տեղեկությունների ստուգման և ապատեղեկատվության հետ աշխատանքի կարիքները բացահայտելու նպատակով: Հարցման և ֆոկուս-խմբային քննարկումների միջոցով ուսումնասիրվել են մայրաքաղաքային և մարզային մեդիայի ներկայացուցիչների փորձը, տեղեկությունների ստուգման ժամանակ հանդիպած դժվարություններն ու դրանք հաղթահարելու մասին նրանց պատկերացումները:

Հետազոտությունն իրականացրել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը. այստեղ ամփոփված առաջարկները կօգտագործվեն Հանրային լրագրության ակումբի կողմից՝ «Մեդիա և տեղեկատվական գրագիտության աքսելերատոր» ծրագրի շրջանակում տեխնոլոգիական լուծումներ մշակելու նպատակով:

Հեղինակ՝ Հրանտ Գալստյան

Խմբագրական կազմ

Նունե Սարգսյան

Լուսինե Գրիգորյան

Գեղամ Վարդանյան

Ձևավորումը Կոլյա Գևորգյանի

Սույն հետազոտությունը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այս հետազոտությունում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ: Հետազոտությունը կատարել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը «Մեդիա և տեղեկատվական գրագիտության աքսելերատոր» ծրագրի շրջանակում, որն իրականացնում է Հանրային լրագրության ակումբը:

Բովանդակություն

1. Նախաբան	4
2. Մեթոդաբանություն	5
2.1. Հարցում	5
2.2. Ֆոկուս-խմբային քննարկումներ	6
3. Կարծիքներ	7
3.1. Ապատեղեկատվությունը՝ մարտահրավեր	8
3.2 Մեդիայի պատասխանատվությունը	9
4. Փորձ	11
4.1. Տեղեկությունների ստուգում՝ ամեն օր	11
4.2. Փաստերի ստուգման ուղեցույց	12
4.3. Մեթոդներ և ռեսուրսներ	13
4.4. Տեղեկությունների ստուգման կարիքներ	15
5. Դժվարություններ և խոչընդոտներ	17
5.1. Օպերատիվության պահանջը	17
5.2. Գիտելիքների և հմտությունների պակասը	19
5.3. Պետական կառույցների աշխատանքը	21
5.4. Մեդիայի գործունեության մոդելները	24
6. Լուծումներ	25
6.1. Մեդիագրագիտություն և մեդիայի գրագիտություն	26
6.2. Լրացուցիչ ֆինանսավորում	27
6.3. Տեխնոլոգիական լուծումներ	29
6.4. Կարգավորումներ	30
7. Եզրակացություններ և առաջարկներ	31
7.1. Եզրակացություններ	31
7.2. Առաջարկներ	32
Հավելվածներ	35
Հավելված 1. Հարցաթերթ	35
Հավելված 2. Ֆոկուս-խմբային քննարկումների հարցաշար	41
Հավելված 3. Ֆոկուս-խմբային քննարկումների և հարցազրույցների մասնակիցների ցանկ	44

1 Նախաբան

Այս հետազոտության նպատակը ապատեղեկատվության հետ աշխատանքի և տեղեկությունների ստուգման հարցերում մեդիա աշխատողների կարիքների բացահայտումն է:

Ապատեղեկատվությունն ավելի ու ավելի մեծ տեղ է զբաղեցնում մեդիայի մարտահրավերների շարքում: Կեղծ կամ մոլորեցնող տեղեկությունների մասշտաբների աճին զուգահեռ՝ մեծանում է նաև դրանց ճանաչմանը, ստուգմանն ու հրապարակմանն ուղղված աշխատանքը մեդիայի ներկայացուցիչների կողմից: Այս հետազոտությունը նպատակ ունի անդրադառնալ այդ աշխատանքի տարբեր կողմերին՝ հիմք ընդունելով մեդիա աշխատողների փորձը, կարիքներն ու կարծիքները:

Այս թեմային անդրադարձող հետազոտություններ դեռևս չեն արվել, հետևաբար ներկա աշխատանքը նախագծվել է հարցերի հնարավորինս լայն շրջանակ ընդգրկելու նպատակով: Մասնավորապես, հետազոտվել են ապատեղեկատվության որոշ ասպեկտների մասին մեդիա աշխատողների կարծիքները, տեղեկությունների ստուգման և ապատեղեկատվության հետ աշխատանքի նրանց փորձը, այդ աշխատանքի դժվարությունները և դրանք հաղթահարելու հնարավոր միջոցները: Այս հարցերին պատասխանելու համար ընտրվել են հարցման և ֆոկուս-խմբային քննարկումների մեթոդները, որոնց կիրառության մանրամասները ներկայացված են հաջորդ գլխում:

Հետազոտության արդյունքները կօգտագործվեն Հանրային լրագրության ակումբի «Մեդիա և տեղեկատվական գրագիտության աքսելերատոր» ծրագրի շրջանակում տեխնոլոգիական լուծումներ մշակելու նպատակով:

2 Մեթոդաբանություն

Այս հետազոտության նպատակների համար ընտրվել են հարցման և ֆոկուս-խմբային քննարկումների մեթոդները: Թիրախային խումբը մեդիա աշխատողներն են, որոնց շրջանակը ծրագրի և հետազոտության նպատակով ներառում է ոչ միայն լրագրողներին ու խմբագիրներին, այլև զանգվածային սպառման բովանդակություն ստեղծող այնպիսի մասնագետների, ինչպես օրինակ տարբեր կառույցների հաղորդակցության մասնագետները: Այնուամենայնիվ, հետազոտությանը մասնակցել են հիմնականում լրագրողները:

2.1 Հարցում

Հարցման մեթոդի կիրառության նպատակն է հնարավորինս մեծ թվով մասնագետներից այս հետազոտության հարցերի մասին միանման և համեմատելի պատասխաններ ստանալը: Այս քանակական տվյալները հնարավորություն են տալիս ոչ միայն մեդիա աշխատողների փորձի ու կարիքների մասին ընդհանրացնելի արդյունքներ ստանալու, այլև, որտեղ հնարավոր է, պարզելու այդ արդյունքների և դեմոգրաֆիական որոշ տվյալների կապը: Ծրագրի համատեքստում այդպիսի ամենակարևոր տվյալը հարցվածների՝ մայրաքաղաքային կամ մարզային մեդիայում աշխատելու հանգամանքն է: Պատասխանների տարբերությունները ընդգծված են այն դեպքերում, երբ գործունեության վայրի (մայրաքաղաք/մարզեր) և պատասխանի միջև վիճակագրորեն նշանակալի կապ կա:

Հարցումն անցկացվել է առցանց տարբերակով: Հարցաթերթը (տես Հավելված 1) պատրաստելու և տարածելու համար օգտագործվել է SurveyMethods.com մասնագիտացված հարթակը: Մինչև հրապարակելը հարցաթերթն անցել է պիլոտային փուլ հետազոտության մասնակից երկու կազմակերպությունների՝ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի (ՄՆԿ) և Հանրային լրագրության ակումբի աշխատակիցների (ՀԼԱ) շրջանում՝ հաշվի առնելով մեդիայի ներկայացուցիչների հետ աշխատանքի նրանց փորձը և մասնագիտական կարիքներին լավատեսյակ լինելը: Պիլոտային փուլում արված դիտարկումների արդյունքում հարցաթերթը փոփոխությունների է ենթարկվել, իսկ վերջնական տարբերակն ուղարկվել է մեդիայի ներկայացուցիչների էլեկտրոնային փոստերին, հրապարակվել ՄՆԿ media.am կայքում և տարածվել Facebook սոցիալական ցանցում: Այս քայլերը ձեռնարկվել են մեդիա աշխատողների հնարավորինս մեծ խմբի հասնելու համար, որպեսզի հարցման ընտրանքը լինի ներկայացուցչական, իսկ արդյունքները՝ ընդհանրացնելի: Հարցումը հասանելի է եղել 2022 թվականի մարտի 21-ից 31-ը: Ստացվել է 131 պատասխան, որից վերլուծվել է 122-ը, քանի որ 9 մասնակից պատասխանել է միայն դեմոգրաֆիական հարցերին (1-ին էջ):

Հարցվածների 76%-ը երևանյան մեդիայի ներկայացուցիչներ են, իսկ 19%-ը՝ մարզային: Եւս 5%-ն իր մասնագիտական գործունեության վայր է նշել և՛ Երևանը, և՛ առնվազն մեկ մարզ:

Հարցվածների 3/4-ից ավելին եղել են իգական սեռի ներկայացուցիչ (77%): 41%-ը ներկայացնում է 25-34 տարիքային խումբը: Նրանց հաջորդել են մինչև 50 տարեկան մասնագետները (35%), ապա՝ մինչև 24 տարեկանները (19%): 51-65 տարեկանները կազմել են ընդհանուր հարցվածների 5%-ը (N=6): Մասնակիցների մեծամասնությունն ունի բարձրագույն կրթություն, մոտավորապես կեսը՝ 10 տարուց ավելի փորձ մեդիա ոլորտում:

Ի՞նչ կրթություն եք ստացել

	%	N
Բարձրագույն	83.6	102
Թերի բարձրագույն	9	11
Միջին մասնագիտական	3.3	4
Միջնակարգ/թերի միջնակարգ	2.5	3
Հետբուհական	1.6	2
Ընդամենը	100	122

Աղյուսակ 1. Հարցման մասնակիցների կրթությունը

Որքա՞ն ժամանակ եք աշխատում մեդիա ոլորտում*

	%	N
10 տարուց ավելի	46.7	57
4-10 տարի	27	33
1-3 տարի	20.5	25
Մինչև 1 տարի	5.7	7
Ընդամենը	100	122

Աղյուսակ 2. Հարցման մասնակիցների փորձը մեդիա ոլորտում (*չհաշված կրթության տարիները)

2.2 Ֆոկուս-խմբային քննարկումներ

Ֆոկուս-խմբային քննարկումների մեթոդն ընտրվել է՝ հարցման պատասխանների վերաբերյալ ավելի խորքային դիտարկումներ ստանալու նպատակով:

Ըստ այդմ, հարցերը հիմնականում վերաբերել են մասնակիցների՝ տեղեկությունների ստուգման փորձին, ապատեղեկատվության և դրա հետ աշխատանքի մասին նրանց կարծիքներին, տեղեկությունների ստուգման գործընթացի դժվարություններին ու դրանք հաղթահարելու լուծումների մասին պատկերացումներին (տես Հավելված 2): Մասնագիտական քննարկումներին մասնակցելու առաջարկ է արվել հարցման փուլում՝ ֆոկուս-խմբային քննարկման մանրամասները ներկայացնելով հարցաթերթի եզրափակիչ մասում, որտեղ ցանկություն հայտնողները հետադարձ կապի տվյալներ են թողել:

Ընդհանուր առմամբ, ֆոկուս-խմբային հանդիպումներին մասնակցելու ցանկություն է հայտնել հարցվածների 20%-ը: Մայրաքաղաքային մեդիայի


աշխատողների քննարկմանը մասնակցելու պատրաստակամություն է հայտնել 22 հարցված: Հանդիպմանը, որը տեղի է ունեցել մայիսի 13-ին Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գրասենյակում, ներկա է եղել 7 մասնակից, հիմնականում լրագրողներ: Մարզային մեդիայի քննարկմանը մասնակցելու ցանկություն է հայտնել 5 հարցված, սակայն քանի որ ոչ բոլորն են կարողացել մասնակցել վերջնական հանդիպմանը, կարիք է եղել ներգրավել այլ մասնակիցների: Քննարկմանը, որն անցկացվել է մայիսի 18-ին՝ հեռավար հանդիպումների Zoom հարթակում, մասնակցել է 4 լրագրող: Երկու խմբերից հավասար թվով մասնակիցների տեսակետներ լսելու նպատակով մարզային մեդիայի ևս 3 ներկայացուցիչների հետ անցկացվել են անհատական հեռախոսային հարցազրույցներ (մասնակիցների ցանկը տես Հավելված 3-ում):

Հետազոտական նյութը, որի վերլուծությունը ներկայացվում է հաջորդ գլխում, կազմված է հարցման քանակական արդյունքներից՝ մշակված և վերլուծված SPSS ծրագրի օգնությամբ, ինչպես նաև որակական տվյալներից, որոնք ստացվել են ֆոկուս-խմբային քննարկումների և հարցազրույցների ձայնագրությունների սղագրությունները վերլուծելու արդյունքում: Քննարկումներում առաջ եկած թեմաները և հարցման արդյունքները փոխլրացնում են իրար:

3 Կարծիքներ

Նախ, փորձել ենք պարզել մեդիա աշխատողների դիրքորոշումը ապատեղեկատվության և փաստերի ստուգման որոշ հարցերի վերաբերյալ: Հարցման արդյունքները ներկայացված են Պատկեր 1-ում:

Համաձայն եք այս պնդումների հետ



Թեև բոլոր պնդումներն էլ հաստատվել են հարցվածների կողմից, նրանք ամենից շատ համաձայնել են այն մտքի հետ, որ ապատեղեկատվության տարածումը վնասում է մեդիայի հեղինակությանը (65%-ը լիովին համաձայն են): Անհամաձայնությունների շարքում առանձնանում է մեդիայի պատասխանատվության մասին պնդումը, ըստ որի՝ ՉԼՄ-ն կիսում է պատասխանատվությունը ապատեղեկատվություն տարածելիս: Հարցման մասնակիցների 8.2%-ը, հիմնականում՝ առցանց մեդիայի ներկայացուցիչները, համաձայն չեն այս պնդման հետ (ևս 1.6%-ը բոլորովին համաձայն չեն):

Ինչ վերաբերում է այն պնդմանը, թե փաստերի ստուգումը բարձրացնում է մեդիայի հանդեպ լսարանի վստահությունը, թեև մեծամասնությունը կողմ է դրան, այն արժանացել է բոլոր չորս պնդումների շարքում ամենաշատ ընդգծված անհամաձայնությանը (2.5%-ը բոլորովին համաձայն չէ) և պատասխանի դժվարությանը (5.7%-ը դժվարացել է պատասխանել):

3.1 Ապատեղեկատվությունը՝ մարտահրավեր

Չնայած ֆոկլու-խմբային քննարկումներում այս անհամաձայնությունները կիսողներ չեն եղել, դրանք տրամադրել են հավելյալ դիտարկումներ նշված հարցերի մասին: Դրանցում, ինչպես շատ այլ հարցերի դեպքում, ապատեղեկատվության՝ մարտահրավեր լինելը կապվում է ժամանակի հետ.

Ապատեղեկատվությունը մարտահրավեր է, քանի որ խլում է ամբողջ ժամանակը: Եթե դաշտ նետված տեղեկությունը հետաքրքիր է, լրագրողը խնդիր ունի դա որևէ ձևով ներկայացնելու: Ըստ այդմ, ստիպված ես դրան տրամադրել որոշակի ժամանակ, իսկ եղ ժամանակը գնում է արդեն Նորմալ Նյութերից:

(Կարմեն, Երևան)

Մեդիայի ներկայացուցիչները ապատեղեկատվությունը մարտահրավեր են համարում նաև այն պատճառով, որ կարծում են՝ դրանք ավելի մեծ լսարան են գտնում, քան հերքումները, եթե այդպիսիք հրապարակվում են:

Ապատեղեկատվությունը տարածվում է բարձաձայն, ակտիվ ժամի, հետաքրքիր վերնագրով և լուսանկարներով կամ տեսանյութով, իսկ հերքումը լինում է աննկատ (կամ այդպես էլ չի տրվում), և մարդկանց մոտ մնում է այն տպավորությունը, ինչին որ ուզել է ապատեղեկատվություն տարածողը հասնել:

(Կարմեն, Երևան)

Այլ մասնակիցներ հիշում են նվազագույն աշխատավարձի բարձրացման մանրամասների և Երևանի կենդանաբանական այգում կենդանու անկման հանգամանքների շուրջ ապատեղեկատվության դեպքերը, որոնց հերքումները կա՛մ չեն հրապարակվել ապատեղեկատվություն տարածող հարթակների կողմից, կա՛մ դատական երկար գործընթացներից հետո «արդեն դա ոչ մեկին պետք չէր»:

3.2 Մեդիայի պատասխանատվությունը

Քննարկումների մասնակիցների շրջանում, ինչպես հարցման պատասխաններում, միանշանակ չէ պատասխանը այն հարցի, թե արդյոք ՉԼՄ-ն կիսում է պատասխանատվությունը ապատեղեկատվություն տարածելիս: Մասնակիցներից երկուսը, հղում անելով իրավական կարգավորումներին, նշում են, որ պատասխանատու է ոչ միայն սկզբնաղբյուրը, այլև տարածողը, քանի որ «սկզբնաղբյուրը կարող է փոխել ինչ-որ դետալներ»: Այս մասնակիցների համոզմամբ՝ տեղեկությունները ստուգելն անհրաժեշտ է նաև դատական վեճերից խուսափելու համար: Նրանք նշում են դեպքեր սեփական փորձից, երբ տեղեկություններ ստուգելը կամ գոնե այդ նպատակով հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկելը և այդ ամենն արձանագրելը օգնել են պաշտպանվել զրպարտության մեղադրանքից:

Մարգարին մեդիայի ներկայացուցիչներից մեկն այս հարցի հետաքրքիր մեկնաբանություն է տալիս, երբ պաշտոնական տեղեկության հավաստիությունը դիտարկում է անձնական պատասխանատվության համատեքստում.

Ես ամեն դեպքում պատասխանատու եմ զգում ինձ, որովհետև դրա տարածողը ես եմ լինելու: Կարդացողը, լսողը մտածում է, որ դա Լուսինեի հրապարակած ինֆորմացիան է, չի խորանում, որ Լուսինեն հղում արեց, ասենք, առողջապահության նախարարությանը:

(Լուսինե, Լոռի)


Այլ մասնակիցներ նշում են, որ ոչ միշտ է պետք տեղեկությունները չստուգելու պատասխանատվությունը թողնել մեդիայի վրա: Հատկապես նկատի ունենալով առանց դիտավորության չճշտված տեղեկություններ տարածելու հնարավորությունը՝ մայրաքաղաքային մեդիայի ներկայացուցիչներից մեկն ասում է, որ դա կախված է «նյութի հետաքրքրությունից և կարևորությունից» և որ «ունիվերսալ լուծումներ կարծես չկան»: Մեկ այլ բացառություն կապվում է դժվար ստուգելի տեղեկությունների հետ.

Միջազգային լրատվություն հրապարակելու պարագայում կարող է արդարացված լինել [պատասխանատվությունը սկզբնաղբյուրին թողնելը], եթե եղ պահին հնարավորություն չկա, ռեսուրսները չկան, լրատվամիջոցը չի հասցնում կամ չգիտի՝ ինչ աղբյուրներով ճշտել ինֆորմացիան: Բայց էլի հղում տալիս, կարծում եմ, ճիշտ է ստուգել՝ ինչպիսի լրատվամիջոցի ենք հղում տալիս, վստահելի աղբյուր է, [թե] վստահելի չէ:

(Արմենուհի, Շիրակ)

Ի դեպ, թեև ֆոկլու-խմբային քննարկումների ժամանակային սահմանափակությունը հնարավորություն չի տվել քննարկել վերջին միտքը աղբյուրի վստահելիության մասին, հարցման ժամանակ մեդիայի ներկայացուցիչները նշել են, թե ինչպես են որոշում անձանոթ աղբյուրների վստահելիությունը: Նրանք հիմնականում ուշադրություն են դարձնում կայքի հղմանն ու կոնկրետ նյութում օգտագործված հղումներին՝ որպես աղբյուրի և տեղեկության արժանահավատության չափանիշների:

Անձանոթ կայքերից տեղեկություններ վերցնելիս ինչի՞ն էք ուշադրություն դարձնում՝ նախքան այդ աղբյուրին վստահելը



Պատկեր 2. Անձանոթ կայքերի տվյալները՝ դրանց վստահելիության ցուցիչ (մեկից ավելի պատասխանի հնարավորություն, N=305)

Վերջապես, պետք է նշել, որ ֆոկլու-խմբային քննարկումների ժամանակ մասնակիցները տեղեկությունների ստուգման կարևորությունը շեշտել են ոչ միայն դրան ուղղակիորեն վերաբերող հարցի պատասխաններում, այլև քննարկումների տարբեր հատվածներում, երբ հակադրությունների միջոցով խոսել են ստուգված և չստուգված տեղեկությունների մասին։ Ստուգված հրապարակումների համար նրանք օգտագործում են այնպիսի որոշիչներ, ինչպես «որակյալ», «ծավալուն», «երկար», «հետաքրքիր», «լուրջ», «արդյունավետ», «նորմալ», «հիմնավոր», «պրոֆեսիոնալ»։ Հակառակ սրան՝ չստուգված տեղեկությունների օրինակներ հիշատակելիս բանալի բառեր են՝ «հրատապ», «հապճեպ», «ցնցող», «սկանդալային», «ինչեղ», «ուռճացված», «հայիոյանք», «ասեկոսե»։ Պատահական է, որ և՛ մարզային, և՛ մայրաքաղաքային քննարկումների չնախատեսված, բայց կարևոր թեմա է դարձել սոնկ կայքերի և սոցիալական ցանցերի դերը ապատեղեկատվություն տարածելու գործում, ինչը մեդիայի ներկայացուցիչներն առանձնացրել են որպես մեկ այլ մարտահրավեր մեդիա դաշտի համար։

4 Փորձ

4.1 Տեղեկությունների ստուգում՝ ամեն օր

Հարցման մասնակիցների մեծամասնությունը հայտնել է, որ ստուգման ենթակա տեղեկությունների հետ գործ ունի ամեն օր:

Ի՞նչ հաճախականությամբ եք առնչվում ստուգման ենթակա տեղեկությունների հետ

	%	N
Ամեն օր	63.1	77
Ամեն շաբաթ	24.6	30
Ամեն ամիս	2.5	3
Ավելի հազվադեպ	0.8	1
Երբեք	0.8	1
Դժվարանում եմ պատասխանել	8.2	10
Ընդամենը	100	122

Աղյուսակ 1. Կասկածելի տեղեկության հետ հարցման մասնակիցների առնչությունը

Նման տեղեկությունների հետ ամենահաճախ առնչվում են 25-34 տարիքային խմբի ներկայացուցիչները (74%-ը՝ ամեն օր): Մայրաքաղաքային մեդիայի ներկայացուցիչներն ավելի հակված են եղել պատասխանելու, որ ամեն օր առնչվում են ստուգման ենթակա տեղեկությունների հետ, քան մարզային մեդիայի աշխատողները (66% և 52%): Վերջիններս ապատեղեկատվության հանդիպում են ավելի քիչ՝ ամեն շաբաթ (35%՝ ի տարբերություն մայրաքաղաքայինի 23%-ի):

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցները հիմնականում հայտնել են, որ մշտապես առնչվում են կեղծ կամ ստուգման ենթակա տեղեկությունների հետ: Ինչպես նրանցից մեկն է նշել պատկերավոր կերպով՝ «տեղեկությունների ստուգումը հաց ուտելու նման է»: Սեփական փորձի մասին այս գրույցով են սկսվել ֆոկուս-խմբային քննարկումները:

[Գործունեության] երեք տարիների ընթացքում գրեթե ամեն օր գործ եմ ունեցել փաստերի ստուգման հետ, որովհետև նույնիսկ մշակութային նյութ պատրաստելիս պարտադիր է լինում որևէ տեղեկատվության ստուգումը, հավաստումը:

(Նատալի, Երևան)

Հիշելով ապատեղեկատվության կամ կասկածելի տեղեկությունների վերջին դեպքերը՝ քննարկումների մասնակիցներից երկուսը նշել են օրինակներ այնպիսի լուրերի, որոնք իրենք խուսափել են հրապարակել, քանի որ քննարկման պահին դեռևս ճշտած չեն եղել դրանց իսկությունը¹: Պետք է նշել, սակայն, որ տեղեկությունները ճշտելը քննարկումների ընթացքում շարունակ կապվել է օպերատիվության հարցի հետ, ինչը կքննարկվի հաջորդ գլխում (տես 5.1. Օպերատիվության պահանջը):

Չրուցակիցները հիշել են նաև այնպիսի դեպքեր, երբ իրենք են հավատացել ապատեղեկատվությանը, քանի որ դրանում որևէ արտառոց բան չի եղել (հայտնի մարդկանց մահվան մասին լուրեր), կամ երբ իրենց ներկայացրած կազմակերպությունն է տարածել չճշտված տեղեկություն:

Սխալմամբ լուրերի ժամին եթեր էր գնացել ոչ էն տեսանյութը, որը պիտի գնար, և անմիջապես հաջորդ 3-4 թողարկման տակ մենք վազող տողով ներողություն ենք հայցել հեռուստադիտողից սխալ տեսանյութ տարածելու համար:


(Արմենուհի, Շիրակ)

4.2 Փաստերի ստուգման ուղեցույց

Մեդիա աշխատողների 42%-ը նշել է, որ իր ներկայացրած լրատվամիջոցը կամ կազմակերպությունն ունի փաստերի ստուգման ուղեցույց: Հետաքրքրական է, որ այս հարցին դժվարացել է պատասխանել գրեթե նույնքան մարդ (27%), որքան նրանք, որոնք հաստատապես հայտնել են, որ չունեն փաստերի ստուգման ուղեցույց (30%):

Նման ուղեցույցով աշխատում են հիմնականում մայրաքաղաքային մեդիայի ներկայացուցիչները: Եթե դրա առկայության մասին նշել են երևանյան մեդիայի ներկայացուցիչների 46%-ը, իսկ բացակայության մասին՝ 28%-ը, մարզերի դեպքում գրեթե հակառակ պատկերն է (30%-ը նշել է, որ ունի, 44%-ը՝ չունի):

Ձեր լրատվամիջոցը / կազմակերպությունն ունի՞ փաստերի ստուգման ուղեցույց



Պատկեր 3. Փաստերի ստուգման ուղեցույցի առկայությունը խմբագրություններում / կազմակերպություններում ըստ գործունեության վայրի (N=121)


¹ Օրինակներից մեկը Ավետիք Չալաբյանի մասնակցությամբ գաղտնալսումն է, որը կասկածելի է թվացել քննարկման մասնակիցներից մեկին, մյուսը՝ Արթուր Վանեցյանի հայտարարությունն այն մասին, որ ոստիկանները ցուցարարներից մեկի աչքն են հանել:

4.3 Մեթոդներ և ռեսուրսներ

Այս հետազոտության կարևոր նպատակներից մեկն է եղել պարզելը, թե տեղեկությունները ստուգելիս հատկապես ինչ մեթոդներ են կիրառում մեդիայի ներկայացուցիչները և ինչ ռեսուրսներից են օգտվում:

Հարցվածների մեծամասնությունը հայտնել է, որ որևէ տեղեկություն ստուգելու համար միշտ այցելում է վստահելի կայքեր, օգտվում է համացանցում ընդլայնված որոնումից և ճշտում է տեղեկությունը առնվազն երկու աղբյուրից:

Որքա՞ն հաճախ եք կիրառում այս մեթոդներն ու ռեսուրսները տեղեկությունը ստուգելու համար



Պատկեր 4. Տեղեկությունների ստուգման մեթոդները և ռեսուրսները (նվազման կարգը՝ ըստ «Միշտ» պատասխանի ցուցանիշների, N=95)

Հետաքրքրական է, որ պաշտոնական ռեզիստորներ այցելողների քանակն ավելին է, քան տվյալների բաց շտեմարաններից օգտվողներինը. առաջինից միշտ օգտվում է մեդիա աշխատողների 63%-ը, երկրորդից՝ 54%-ը: Պաշտոնական ռեզիստորների այս լայն կիրառությունը (միայն 1%-ն է նշել, որ երբեք չի օգտվում) նաև առաջ է բերել դժգոհություններ: Տեղեկությունները ստուգելու հիմնական խոչընդոտների շարքում, առաջարկված տարբերակներից բացի, հարցվածները տվել են այնպիսի պատասխաններ, ինչպես «անվստահությունը պաշտոնական աղբյուրների հանդեպ» և «ոչ թվային բազաներում ժամանակատար որոնումը»: Ընդհանրապես, պաշտոնական աղբյուրներից դժգոհությունը առանցքային թեմա է դարձել նաև ֆոկլու-իմբային քննարկումների ընթացքում, ինչին նվիրված է հաջորդ գլխի բաժիններից մեկը (տես 5.3. Պետական մարմինների աշխատանքը):

Ուշադրության են արժանի նաև այն մեթոդներն ու ռեսուրսները, որոնցից հարցվածների մի մասը երբեք չի օգտվում: Դրանք հիմնականում հենց փաստերի ստուգմանը վերաբերող աղբյուրներն են՝ ձեռնարկները (այլալեզու ձեռնարկներից


երբեք չի օգտվում հարցվածների 42%-ը, իսկ հայերեն ձեռնարկներից՝ 34%-ը) և մասնագիտացած հարթակները (արտասահմանյան՝ 24%, հայաստանյան՝ 17%):

Այս հարցը տրվել է նաև ֆոկլուս-խմբային քննարկումների մասնակիցներին: Նպատակը եղել է նախևառաջ կոնկրետ ռեսուրսների կիրառման հնարավորություններին և սահմանափակություններին ծանոթանալը, որոնց անդրադարձ կարվի լուծումների մասին գլխում (տես 6.3. Տեխնոլոգիական լուծումներ): Այստեղ նշենք միայն այն ուշագրավ հանգամանքը, որ թեև հարցման դեպքում մարզային և մայրաքաղաքային մեդիայի աշխատողների պատասխաններում էական տարբերություններ չկան, ֆոկլուս-խմբային քննարկումներում մարզային լրագրողներն ավելի հակված էին խոսել տեղեկությունների ստուգման ավանդական մեթոդների և պաշտոնական աղբյուրների մասին, քան այլընտրանքային ռեսուրսների: Պատճառները նույնպես ներկայացված է տեխնոլոգիական լուծումներին հատկացված բաժնում:

Վերջապես, տարբերություն է նկատվել ռեսուրսների իմացության և կիրառության հարցում մայրաքաղաքային խմբի ներսում: Մասնակիցներից մեկը, որը լրագրության ֆակուլտետի ուսանող է և անցնում է տեղեկությունների ստուգման դասընթաց, ավելի լավատեղյակ է առկա ռեսուրսներին և լավատես՝ դրանց կիրառությունների և հնարավորությունների հարցում: Մյուս կողմից, գործնական լրագրության փորձ ունեցողները համեմատաբար քիչ ռեսուրսներից են օգտվում, բայց ծանոթ են տեղական համատեքստում դրանց կիրառման դժվարություններին: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել (հիմնվելով նաև քննարկումների այլ դիտարկումների վրա), որ առկա ռեսուրսներին ծանոթ լինելը ընդլայնում է տեղեկությունների ստուգման հնարավորությունների մասին պատկերացումները և կարևոր պայման է՝ դրանց կիրառման առանձնահատկություններն ու դժվարությունները գնահատելու համար:

Մեկ այլ հարցով հարցման մասնակիցներից փորձել ենք իմանալ, թե ինչ միջոցներ են ձեռնարկում, երբ հրապարակման են պատրաստում այլոց ստեղծած բովանդակությունը: Օրինակ, ի՞նչ են անում, երբ տեղեկությունը վերցնում են լսարանից կամ սոցիալական մեդիայի օգտատերերից: Հարցման ամեն մասնակից այս հարցին տվել է միջինում 2 պատասխան, որոնց մեջ մեծ տեղ է զբաղեցնում այլ աղբյուրներից տեղեկությունը ճշտելը (36%):

Եթե հրապարակման համար տեղեկություն եք ստանում լսարանից կամ սոցիալական մեդիայից, սովորաբար ի՞նչ եք անում՝ մինչև հրապարակելը




Պատկեր 5. Լսարանից կամ սոցիալական մեդիայից վերցրած տեղեկության հրապարակումը (մեկից ավելի պատասխանի հնարավորություն, N=223)

4.4 Տեղեկությունների ստուգման կարիքներ

Վերջապես, հետազոտության նպատակի համար առանցքային հարցերից մեկը վերաբերել է տեղեկությունների ստուգման կարիքներին: Այս հարցի պատասխանները համադրվել են ռեսուրսների կիրառության փորձի և հանդիպած դժվարությունների հետ՝ բովանդակությունը ստեղծողների կարիքների մասին ավելի ամբողջական պատկեր ստանալու նպատակով:

Այս հարցի տարբերակներից ամենաշատ պատասխանը ստացել է քարտեզների հետ աշխատանքի մասին գիտելիքը. ամեն 5-րդ պատասխանը վերաբերել է այս կարիքին: Պատասխանն ընտրածների մոտ 70%-ը հայտնել էր, որ երբեմն օգտվում է առցանց քարտեզներից՝ տեղեկությունը ստուգելու համար (տես Պատկեր 4): Մյուս կողմից, դրանց հետ աշխատանքը նշվել է որպես տեղեկությունների ստուգման ամենադժվար մասերից մեկը (տես Պատկեր 8): Այս տվյալները ցույց են տալիս, որ մեդիայի ներկայացուցիչները ծանոթ են քարտեզների կարևորությանը՝ որպես տեղեկությունները ստուգելու միջոց, սակայն բավարար չափով չեն տիրապետում դրանց կիրառությանը և ցանկանում են ավելի իմանալ հնարավորությունների մասին:

Նշվածներից որի՞ մասին կցանկանայիք ավելի շատ գիտելիք ձեռք բերել



Պատկեր 6. Կարիքներ տեղեկությունների ստուգման հարցում (մեկից ավելի պատասխանի հնարավորություն, N=251)

Հարցվողները անհրաժեշտ գիտելիք են համարել նաև թվային բովանդակության (օր.՝ լուսանկարի, տեսանյութի) իսկությունը ստուգելը: Այս պատասխանն ընտրածների մոտ 40%-ը հայտնել է, որ տեղեկություններ ստուգելիս միշտ օգտվում է համապատասխան հարթակներից, գրեթե նույնքան մարդ էլ դրանցից օգտվում է երբեմն: Թվային բովանդակությունը ստուգելը նշվել էր որպես 4-րդ ամենադժվար մասը տեղեկությունների ստուգման գործում: Այսինքն, այս դեպքում ևս հարցվածները ցանկանում են ավելի իմանալ այնպիսի գործիքների ու հարթակների մասին, որոնցից օգտվելու փորձ ունեն, բայցև դժվարությունների են հանդիպում կիրառելիս:

Նույնքան պատասխան է ստացել հարցն այն մասին, թե ում պետք է դիմել, եթե օգնության կարիք կա տեղեկությունը ստուգելիս: Թեև հարցվածները գործընկերների օգնությանը դիմում են միշտ (23%) կամ երբեմն (77%) (տես Պատկեր 4), այս հարցի պատասխանը կարելի է մեկնաբանել որպես մասնագիտացած անհատների կամ խմբերի դիմելու կարիքի արտահայտություն: Լրագրողական համայնքի համատեղ աշխատանքը, որպես տեղեկությունների ստուգման պրակտիկայի բարելավման միջոց, առաջնահերթ է համարել հարցվածների 41%-ը:

Մարզային և մայրաքաղաքային մեդիայի ներկայացուցիչների արտահայտած կարիքների միջև էական տարբերություններ չեն նկատվել:


5 Դժվարություններ և խոչընդոտներ

Վերլուծության այս հատվածում ներկայացված են տեղեկությունների ստուգման գործում մեղիա աշխատողներին հանդիպող դժվարություններն ու այդ գործի այն խոչընդոտները, որոնք կարևորվել են հարցման և քննարկումների արդյունքում: Առաջին երկու խոչընդոտները՝ օպերատիվության պահանջը և գիտելիքի ու հմտությունների պակասը, ներառված են եղել հարցաթերթերում և ֆոկուս-խմբային քննարկման հարցերում, մինչդեռ մյուս երկուսը՝ պետական մարմինների աշխատանքի և մեղիայի գործունեության մոդելների մասին, կարևորվել են քննարկումների մասնակիցների կողմից:

5.1 Օպերատիվության պահանջը

Հարցման արդյունքներում օպերատիվության պահանջը նշվել է որպես տեղեկությունների ստուգումը խոչընդոտող հիմնական հանգամանք, որը կարևորել են հատկապես առցանց մեղիայի և հեռուստատեսության ներկայացուցիչները:

Ձեր կարծիքով, ո՞րն է տեղեկությունները ստուգելու հիմնական խոչընդոտը



Պատկեր 7.1. Տեղեկությունների ստուգմանը խոչընդոտող հանգամանքները (մեկից ավելի պատասխանի հնարավորություն, N=248)

Օպերատիվության հարցը եղել է նաև ֆոկուս-խմբային քննարկումների առանցքային հարցերից մեկը, որին անդրադարձ են եղել տարբեր թեմաների համատեքստում: Ինչպես նշվեց ապատեղեկատվության փորձին նվիրված բաժնում (տես 4.1. Տեղեկությունների ստուգում՝ ամեն օր), տեղեկությունների ստուգումը շարունակ կապվել է օպերատիվության հարցի հետ. լրատվության հաղորդման օպերատիվության և ճշտված տեղեկություններ հաղորդելու պայմանների միջև երկրնստրանքը եղել է քննարկումներում կրկնվող մտահոգություններից մեկը: Բացի այդ, ժամանակի հարցը երբեմն օգտագործվել է՝ չստուգված և ստուգված հրապարակումների հակադրությունը ցույց տալու համար, ինչպես հրատապ/հապճեպ-ծավալուն/երկար հակադրության մեջ:

Օպերատիվության պահանջը ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներից մեկը բնութագրում է որպես տեղեկության հոսքից հետ չմնալու «խուճապ լրատվականների մեջ»: Վերը նշված կարիքների միջև ընտրության հարցին մասնակիցը պատասխանում է, որ փորձառության հետ փոխվել են առաջնահերթությունները.

Եթե քննարկումը լիներ մի քանի տարի առաջ, գուցե ասեի հրատապությունը, բայց փորձառությունը ցույց է տալիս, որ երբեմն պետք չէ լինել ավելի հրատապ, մանավանդ հիմա: Գուցե պատերազմական իրավիճակը թրժեց մեզ էս ընթացքում: Ես կնախընտրեմ աշխատել ոչ հրատապ, բայց տալ ճշգրիտ տեղեկատվություն:

(Արմենուհի, Շիրակ)

Նման որոշումը, սակայն, հեշտ չէ իրագործելը, քանի որ տեղեկությունների ստուգումը ժամանակատար է: Բնապահպանական թեմաներ լուսաբանող լրագրողի խոսքով՝ մինչ իրենք բոլոր կողմերից տեսակետներ են վերցնում, «մյուս կայքերի տեղեկություններն արդեն լայն լսարան գտած են լինում»: Այս դժվարության մասին է խոսում նաև հանրային հեռարձակողի ներկայացուցիչը.


Մենք երբևէ չենք գնում լայքերի, քլիքերի հետևից, ֆինանսավորման խնդիր էլ չունենք, բայց մյուս կողմից նաև չճշտված տեղեկություն չտալու պատճառով մենք երբեմն ուշանում ենք տեղեկություններ տալուց:

(Լիանա, Երևան)

Այսինքն, տեղեկությունների ստուգումը դժվարացնում է դրանք ժամանակին լսարանին հասցնելու գործը նույնիսկ երբ օպերատիվությունն ու ֆինանսավորումը առաջնային մտահոգության հարցեր չեն մեդիայի համար: Այս հանգամանքը ինչ-որ չափով պայմանավորված է տեղեկությունների ստուգման տեղական համատեքստով և պաշտոնական աղբյուրների հետ աշխատանքով, որին անդրադարձ կարվի այս գլխի մեկ այլ բաժնում (5.3. Պետական մարմինների աշխատանքը):

Ինչպես հարցման արդյունքներում, այնպես էլ քննարկումներում նկատելի է օպերատիվությունը որպես խոչընդոտ ընկալելու տարբերությունը մայրաքաղաքային և մարզային մեդիայի ներկայացուցիչների կողմից: Հարցման ժամանակ մարզային մեդիայի ներկայացուցիչների համար օպերատիվության պահանջը չի թվում այնքան մեծ խոչընդոտ փաստերի ստուգման համար, որքան երևանյան մեդիայի ներկայացուցիչների համար ([տես Պատկեր 7.2.](#)): Նմանապես, մարզային քննարկման մասնակիցները ժամանակը չեն դիտարկում լրացուցիչ պայման՝ ճշտված տեղեկություններ հայտնելու համար: Այս մասին նրանք ասում են՝ «Մեծ ժամանակ չի պահանջում, ընդամենը բարեխղճություն է պահանջում», «Եթե ես նյութի վրա աշխատում եմ, այսպես թե այնպես ժամանակ եմ ծախսելու», «Ընդհանրապես, լավ նյութ պատրաստելը լավ ժամանակ է խլում»:

Ձեր կարծիքով, ո՞րն է տեղեկությունները ստուգելու հիմնական խոչընդոտը



Պատկեր 7.2. Տեղեկությունների ստուգմանը խոչընդոտող հանգամանքները՝ ըստ հարցվողների գործունեության վայրի (մեկից ավելի պատասխանի հնարավորություն, N=248)

5.2 Գիտելիքների և հմտությունների պակասը

Չնայած տեղական/հայալեզու բովանդակությունը ստուգող ռեսուրսների պակասը նշվել է տեղեկությունները չստուգելու երկրորդ հիմնական պատճառ հարցման արդյունքներում, այն չի դարձել հիմնական թեմա քննարկումների ընթացքում: Փոխարենը, անհրաժեշտ հմտություններ չունենալը հարցվողները նշել են որպես երրորդ հիմնական խոչընդոտ, իսկ ֆոկուս-խմբային քննարկումների և հարցազրույցների մասնակիցներն ընդգծել են գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման կարևորությունը:

[Հաճախ] ստուգելու մեթոդներ կան, ու կարծում եմ՝ շատ կան, ուղղակի հարցը դրանց տիրապետելը, դրանց մասին իմանալն է: Բազմաթիվ գործիքներ կան, որոնցից մենք պարզապես տեղյակ չենք:

(Լուսինե, Երևան)

Այս դիտարկումը վերաբերում է ինչպես ժամանակակից ռեսուրսների ու գործիքների, այնպես էլ մեթոդների իմացությանը: Քննարկման մասնակիցը պարզաբանում է, որ դա ներառում է նաև գիտելիքն այն մասին, թե «որ տեղեկատվության համար որ կառույցին պիտի դիմել»: Ուշագրավ է, որ այս մասին խոսակցությունները նույնպես երբեմն հղվում են ժամանակի հարցին՝ տեղեկացված լինելը լրագրողներին կօգնի «իրենց ժամանակը ճիշտ օգտագործել»:

Հարցման մասնակիցների 71%-ը նշել է, որ նախկինում մասնակցել է որևէ դասընթացի, սեմինարի կամ վերապատրաստման՝ նվիրված ապատեղեկատվությունը ճանաչելուն և ստուգելուն: Հարցաթերթի այլ տվյալների հետ համադրությունը ցույց է տալիս որոշ հարաբերակցություն դասընթացներին մասնակցության և այն մեթոդների ու ռեսուրսների միջև, որոնցից օգտվում են

հարցվածները: Ինչպես վերը նշվեց, հարցվածների մեծամասնությունը նշել է, որ տեղեկությունը ստուգելիս միշտ ընդլայնված որոնում է անում համացանցում: Այստեղ հարկ է ավելացնել, որ այս մեթոդը միշտ կիրառողների 1/3-ը (76.5%) նախկինում մասնակցել է փաստերի ստուգմանը նվիրված դասընթացի, սեմինարի կամ վերապատրաստման: Նմանատիպ հարաբերակցություն կա նաև դասընթացների մասնակցած լինելու և տեղեկությունը ստուգելիս վստահելի կայքեր այցելելու միջև: Դասընթացներին մասնակցածները ավելի հաճախ են այցելում փաստերի ստուգման մեջ մասնագիտացած հարթակներ՝ տեղական թե միջազգային: Իհարկե, հարաբերակցությունը ցույց չի տալիս պատճառային կապ դասընթացների այցելության և հմտությունների ու գիտելիքների ձեռքբերման միջև, այդ պատճառով դասընթացների արդյունավետությունը քննարկվել է նաև ֆոկլուս-խմբային քննարկումների ժամանակ:

Քննարկման մասնակիցները նշել են, որ սեմինարներին մասնակցությունը հիմնականում լրագրողների նախաձեռնությունն է, իսկ խմբագրությունները քիչ են հետաքրքրված նրանց գիտելիքների ձեռքբերմամբ:

Ոչ միշտ է լինում, որ հենց խմբագրությունն է ուղարկում որևէ լրագրողի, որ՝ գիտես ինչ՝ էսպիսի հնարավորություն կա, գնա սովորի: Հիմնականում լրագրողներն են ձեռնամուխ լինում, [...] խնդրում են խմբագրությանը, որ աշխատանքային ժամից գնան, կրթվեն, որպեսզի ավելի որակյալ նյութ պատրաստեն:

(Նատալի, Երևան)

Կարծում եմ՝ [...] հենց խմբագրությունը պետք է շահագրգռված լինի, որ լրագրողը մասնագիտական կարողությունները ներդնի և այդ ինֆորմացիան ավելի ճիշտ տարբերակներով ստուգի՝ նախքան հրապարակելը:

(Անի, Շիրակ)

Մասնակիցների խոսքով՝ խմբագրությունները նախընտրում են, որ լրագրողը դասընթացի մասնակցության փոխարեն ևս երկու նյութ պատրաստի, մինչդեռ համոզված են, որ փոխարենը պետք է մտածել երկարաժամկետ արդյունքների մասին:

Ինչ վերաբերում է մասնակցության ձևաչափին, նախընտրությունները տարբերվում են: Երևանյան քննարկման մասնակիցներից մեկը նշել է, որ «լրագրողները ժամանակի՝ սեմինարներին հասնել-մասնակցելու խնդիր ունեն» և առաջարկել դրանք անցկացնել հեռավար: Մյուս կողմից, մարզային մեդիայի ներկայացուցիչներից մեկը պակաս արդյունավետ է համարել առնցանց դասընթացները և կարևորել «մարդկային շփումը»: Դասընթացների մասին մեկ այլ նկատառում գալիս է հարցման պատասխաններից՝

Լավ կլինի նաև հատկապես դրսից հրավիրված փորձագետները հայաստանյան ՉԼՄ-ների հետ աշխատելիս՝ չսովորեցնեն վերնագիր ու լիդ գրել [...]:


(Հարցման անանուն մասնակից)

5.3 Պետական կառույցների աշխատանքը

Պետական մարմինների հետ աշխատանքից դժգոհությունները արտահայտվել են հարցման պատասխաններում, ապա նաև՝ ֆոկլուս-խմբային քննարկումների և հարցազրույցների ընթացքում:

Հարցման արդյունքներում, որպես փաստերի ստուգման աշխատանքի ամենադժվար մաս, նշվել է հենց տեղեկությունը տնօրինողից պարզաբանում ստանալը² (պատասխանների 21%-ը):

Նշեք տեղեկությունների ստուգման աշխատանքի ամենադժվար մասը / մասերը



Պատկեր 8. Տեղեկությունների ստուգման դժվարությունները (մեկից ավելի պատասխանի հնարավորություն, N=223)

Ինչպես նշվեց ավելի վաղ, տեղեկությունների ստուգման խոչընդոտների շարքում նշվել էին նաև «անվստահությունը պաշտոնական աղբյուրների հանդեպ», «ոչ թվային բազաներում ժամանակատար որոնումը»: Ինչպես երևում է Պատկեր 6-ում, բաց աղբյուրներից և պաշտոնական ռեգիստրներից օգտվելու մասին գիտելիքներ ձեռք բերելը կարևորվել է նույնքան, որքան համացանցում արդյունավետ որոնում անելը: Տեղեկությունների ստուգման պրակտիկայի բարելավմանն ուղղված լուծումների շարքում հարցվողներից մեկը նշել է՝ «պաշտոնական տեղեկություն ստանալու հասանելիությունը», իսկ մեկ այլ մասնակից գրել է.

Եթե սուտ ասելու համար խոսնակները պատասխանատվության ենթարկվեին, գուցե դա որոշակիորեն օգներ վերականգնել նրանց հանդեպ վստահությունը, և հնարավոր լիներ հիմնվել նրանց խոսքի վրա:

(Հարցման անանուն մասնակից)

Այս տվյալները վկայում են, որ պաշտոնական հաստատություններից և տեղեկությունների աղբյուրներից օգտվելու կարիքը մեծ է, խոչընդոտները՝ շատ: Ֆոկլուս-խմբային քննարկումներն ու հարցազրույցները թույլ են տվել ավելի մանրամասն պատասխաններ ստանալ պետական մարմինների հետ աշխատանքի փորձառության և մեդիայի ներկայացուցիչների դժգոհությունների բնույթի մասին: Հետևելով դժգոհություններին՝ այս խոչընդոտները կարելի է երկու խմբի բաժանել՝ միտումնավոր և ինստիտուցիոնալ:

Միտումնավոր խոչընդոտները վերաբերում են այն դժվարություններին, որոնք պաշտոնյաները ստեղծել են մեդիայի աշխատանքի համար: Դրանք

² Հարցաշարում ներկայացված է եղել որպես վերջին տարբերակ

արտահայտվում են ինչպես իշխանությունների կողմից «յուրային և ոչ յուրային» լրատվամիջոցներ սահմանելով, այնպես էլ այն հանգամանքով, որ «իշխանություն-ընդդիմություն» բոլորը տեղափոխվել են սոցցանցեր» և նախընտրում են հարցազրույց տալու փոխարեն իրենց ասելիքը գրառումներով ներկայացնել:

[Իշխող խմբակցության ներկայացուցիչները] հիմնականում զանգերին չեն պատասխանում, հիմնականում չափազանց անպատասխանատու վերաբերմունք է լրատվամիջոցների, լրագրողների աշխատանքի նկատմամբ: Մեծամասամբ մերժում են բոլոր հարցազրույցները, բայց իրենց կարելի է տեսնել ընդամենը մի քանի՝ 3-4 լրատվամիջոցների հարթակներում: Սա իհարկե շատ խանգարում է մեզ:

(Արմենուհի, Շիրակ)

Մեդիայի ներկայացուցիչները նաև նշում են, որ արժանահավատ տեղեկություն ստանալուն մեծապես խոչընդոտում է քաղաքական բևեռացվածությունը:

Գյուղապետին երբ որ զանգես-հարցնես, գուցե քաղաքական դրդապատճառներից, իր քաղաքական հայացքներից ելնելով՝ մի ուրիշ տեղեկատվություն տա, որը ևս ճշտելու կարիք կունենա:

(Լուսինե, Երևան)

Քանի որ լրատվամիջոցների մի մեծ մասը հովանավորվում է քաղաքական ուժերի կողմից, այս բևեռացվածությունը արտահայտվում է նաև նրանց աշխատանքում և ապատեղեկատվություն տարածելու «խմբագրական քաղաքականության» մեջ: Այս հարցի շուրջ քննարկումներում բանալի բառեր են «մանիպուլյացիան» և «գործիքը»:

Երբ որ մենք խոսում ենք տեղեկատվության մասին, կարևոր է, որ մենք հասկանանք՝ էդ տեղեկությունը որտեղից ա տարածվում: Եթե նույնիսկ լրատվամիջոց ա, հասկանանք, թե որ թևի լրատվամիջոցն ա:

(Լուսինե, Լոռի):

Լրագրողական համայնքը [պետք է] միմյանց նկատմամբ ոչ թե չարախնդորեն վերաբերվի, այլ հանդուրժողականությամբ ու հարգանքով: Մենք էսօր ունենք ծայրահեղ բևեռացված իրավիճակ, ունենք լրագրողներ՝ ծայրահեղ ընդդիմադիր և ծայրահեղ իշխանամետ կեցվածքով: Հենց դա կարող է հանգեցնել ապատեղեկատվությանն ու դաշտում տիրող քաոսին:

(Անժելա, Արմավիր)

Միտումնավորության հարցը սուր է ընկալվում հատկապես այն պատճառով, որ այստեղ, ինչպես քննարկումների այլ հատվածներում, լրագրողները հաճախ ապատեղեկատվությունը քննարկում են «սահմանային դրության»,

«ազգային անվտանգության» համատեքստում: Մասնակիցները նշում են, որ տեղեկատվական դաշտը «լրացուցիչ սթրեսի բաժին» է ապահովում առանց այն էլ սթրեսի ու կորուստների մեջ գտնվող հասարակության համար, և որ հատկապես «Սյունիքի մասին ապատեղեկատվությունը չարիքի նման մի բան է»:

Ես կարծում եմ, որ անկախ ինչ-որ քաղաքական դիրքորոշումներից, այս կամ այն քաղաքական, պետական գործչին համակրել-հակակրելուց էն կողմ ինչ-որ կարմիր գծեր պետք է լինեն, որ [լրագրողները] չանցնեն: Նախկինում եղել են էդ կարմիր գծերը, ես չեմ հիշում, որ... Վերջին պատերազմից առաջ էլ, հետո էլ տեսանք, որ ոչ մի կարմիր գիծ չի անցնում ու [պատրաստ են] ազգային անվտանգության առնչվող ամեն թեմա ոտնատակ տալ, միայն թե իրենք շահույթ ապահովեն ու սպասարկեն կոնկրետ քաղաքական խմբակի շահերին:

(Թագուհի, Երևան)

Ինստիտուցիոնալ խոչընդոտները, մյուս կողմից, վերաբերում են պաշտոնական տեղեկությունների տրամադրման որոշ ընթացակարգերի: Զննարկման մասնակիցների ներկայացրած օրինակներից են պարզաբանումների համար հնգօրյա ժամկետը (և երբեմն դրանից հետո ծանուցումը, որ կառույցը իրավասու չէ պատասխանել), լաբորատոր քննությունների արդյունքների ժամանակատարությունը, ինչպես նաև գերատեսչությունների կողմից տարբերվող տվյալներ մշակելը, որոնց համեմատության և վերլուծության գործը մնում է լրագրողին: Ստորև այս դժվարությունների քննարկման մի օրինակ է մայրաքաղաքային մեդիայի հանդիպումից.

- Հարց ա՛ն կարո՞ղ ենք մենք այդքան սպասել, թե ոչ:
- Գուցե արդիականությունը կորցնի:
- Արդիականությունը կարող է ընդհանրապես կորցնել, ու նույնիսկ արդեն դրանից հետո անհրաժեշտ է չլինի անդրադառնալ այդ հարցին:
- Ու մի բան էլ հանրությունը բարկանա, որ նորից ես թեման, երբ որ արդեն անցել-գնացել է:

(Լուսինե և Նատալի, Երևան)

Զննարկման մասնակիցներից մեկի խոսքով՝ նաև նման ընթացակարգերն են պատասխանատու ապատեղեկատվության տարածման համար:

Մարգարին մեդիան նույնպես հանդիպում է այս դժվարությանը, թեև որոշ դեպքերում տեղական լուրերի ստուգումը նրանց համար կարող է ավելի հեշտ լինել.

Որոշ առումով մեզ համար ավելի հեշտ է [տեղեկություն] ստուգելը, որովհետև գործում է ծանոթ-բարեկամ գտնելու, գնալ-ստուգելու [մեթոդը]: Բայց ինչ վերաբերում է պետական աղբյուրներին՝ ոչ տեղական գերատեսչություններին, դա սարսափելի է:

(Սուսաննա, Սյունիք)

5.4 Մեդիայի գործունեության մոդելները

Քննարկումների արդյունքում առաջ եկած մյուս խոչընդոտը, որքան էլ բացահայտ ձևով չարտահայտված, մեդիայի գործունեության այն մոդելներն են, որոնք թույլ չեն տալիս տեղեկությունների ստուգմանը տրամադրել բավարար նյութական և ժամանակային ռեսուրսներ: Այս միջավայրը բնութագրվում է որոշակի քանակի նյութերի արտադրության պահանջով, «քլիքերի» և «ռեյտինգի» առաջնայնությամբ, ֆինանսական միջոցների սղությամբ կամ խնայողությամբ:

Վերջին տարիներին մի բան է ձևավորվել, որ ինչ-որ իքս քանակի նյութ է դրվում լրագրողի վրա, որ օրվա ընթացքում պետք է ապահովի, ու դու արդեն ճշտելու ոչ ժամանակ ես գտնում, ոչ էլ էներգիա:

(Թագուհի, Երևան)

Մարգային մեդիայի ներկայացուցիչներից մեկն ասում է, որ խնդիրների, այդ թվում՝ ապատեղեկատվության, պատճառներից հիմնականն այն է, որ Հայաստանում անկախ լրատվամիջոցը չի կարող ապահովել գոյությունը: Մեկ այլ մասնակից նշում է «ունիվերսալության սկզբունքը», որի համաձայն՝ մարգային մեդիայի ներկայացուցիչներից ակնկալվում է լինել և՛ լրագրող, և՛ օպերատոր, և՛ մոնտաժող: Հետևաբար, մարգային մեդիայի ղեկավարությունը, մասնակցի համոզմամբ, չի համաձայնի ներդրումներ անել, օրինակ, համապատասխան հաստիք ունենալու համար, այլ տեղեկությունների ստուգումը կներառի լրագրողների պարտականությունների կազմում՝ ի թիվս մյուսների:

Վերջապես, մայրաքաղաքային մեդիայի ներկայացուցիչներից մեկը նշում է, որ լսարանի ամեն պահանջ ապահովելու գնով վարձատրվելը մեդիայի համար նույնքան անցանկալի է, որքան հովանավորի պատվերը կատարելով ֆինանսավորվելը:


Եթե աշխատենք մի քիչ երկարաժամկետ, այսինքն լսարանի պահանջի որակի բարձրացման վրա, մեդիագրագիտության վրա, էդ դեպքում մենք կունենանք երկարաժամկետ լավ արդյունք: Եթե շարունակենք թողնել, որ քլիքները ապահովեն և՛ ռեյտինգը, և՛ աշխատավարձը, էդ դեպքում խնդիրը գնալով խորանալու է:

(Կարմեն, Երևան)

6 Լուծումներ

Ունենալով ապատեղեկատվության հետ աշխատանքի ամենօրյա փորձ և պատկերացնելով խոչընդոտները՝ ինչպե՞ս են մեդիա աշխատողները պատկերացում տեղեկությունների ստուգման պրակտիկան բարելավելու հնարավորությունները: Հարցման մասնակիցներն այս հարցի տարբերակների շարքում ամենից մեծ կարևորությունը տվել են կրթությանը, բուհերում տեղեկության ստուգման հմտությունների ուսուցանումը ամենաառաջնահերթ լուծումն է համարել հարցվածների 63%-ը: Սրան հաջորդում է քննադատական մտածողության զարգացումը՝ 61%:

Ըստ առաջնահերթության, նշեք այն լուծումները, որոնք Ձեր կարծիքով կբարելավեն տեղեկությունների ստուգման պրակտիկան հայաստանյան մեդիայում



Պատկեր 9. Տեղեկությունների ստուգման պրակտիկան բարելավելուն ուղղված լուծումները՝ ըստ հարցվածների (N=82)³

Մարզերի ներկայացուցիչներն ավելի հակված են բուհերում տեղեկությունների ստուգման հմտությունների ուսուցանմանը առաջնահերթություն տալուն. նրանց 67%-ը շատ առաջնահերթ է համարել այս լուծումը, մնացածը դասել են այն 2-րդ և 3-րդ առաջնահերթությունների շարքում: Լուծման այս տարբերակի նախընտրության հարցում տարբերություն է նկատվել նաև ըստ մեդիայի տեսակների. հեռուստատեսության ներկայացուցիչների 74%-ը շատ առաջնահերթ է համարել բուհական համապատասխան ծրագրերը, 5%-ը՝ քիչ առաջնահերթ, մինչդեռ օնլայն մեդիայի ներկայացուցիչների 56.5%-ն է այն համարել շատ առաջնահերթ, իսկ 10%-ը՝ քիչ առաջնահերթ: Գրեթե նույն պատկերն է սեմինարների դեպքում՝ 68%/5% և 39%/8%:

Ստորև կներկայացվեն այն լուծումները, որոնք կա՛մ կարևորվել են միաժամանակ հարցման և քննարկումների արդյունքում, ինչպես լրացուցիչ ֆինանսավորումն ու տեխնոլոգիական լուծումները, կա՛մ հարցաթերթում ներառված չեն եղել և առաջ են եկել քննարկումների արդյունքում, ինչպես մեդիագրագիտությունը և կարգավորումները:

³ Հարցաթերթում սանդղակը եղել է հակառակ կարգով՝ քիչ առաջնահերթից շատ առաջնահերթ, ինչն այստեղ փոխվել է ներկայացման նպատակով

6.1 Մեդիագրագիտություն և մեդիայի գրագիտություն

Մեդիագրագիտությունը երկու ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ էլ քննարկվել է որպես ապատեղեկատվության խնդրի հաղթահարման և տեղեկությունների ստուգման պրակտիկայի բարելավման կարևոր միջոց: (Թեև հարցաթերթում և քննարկումների հարցերում մեդիագրագիտությունը նշված չի եղել, այն կարելի է մոտ համարել ավելի լայն՝ «Լսարանի կողմից նման պահանջի ձևավորում» և «Քննադատական մտածողության զարգացում» տարբերակների իմաստներին:)

Նախորդ գլխի եզրափակիչ դիտարկմամբ՝ մեդիագրագիտությունը կարող է լինել լրատվության առկա մոդելների ստեղծած խոչընդոտները հաղթահարելու միջոց: Շարունակելով գրույցը՝ քննարկման մասնակիցն ասում է, որ «երբ լսարանը ավելի լուրջ պահանջներ կներկայացնի, թերևս էդ պահանջարկը ապահովելուն կտրամադրվեն ռեսուրսներ»:

Մեկ այլ մասնակից, որը բնապահպանական ոլորտն է լուսաբանում, եզրակացնում է, որ ոչ միայն լուրերի սակավությամբ, այլև մեդիագրագիտությամբ է պայմանավորում այն, որ որոշակի ոլորտներում ապատեղեկատվությունը քիչ է:

[Բնապահպանության] ոլորտում ապատեղեկատվությունը քիչ է, որովհետև մեր լսարանն էլ է փոքր ու հիմնականում մարդիկ են, որոնց կոնկրետ հետաքրքրում են բնապահպանական խնդիրները: Իրենք հիմնականում էկոլոգներ են, գիտական աշխատանքներ անողներ են կամ աղբ [տեսակավորող] մարդիկ են, որ հաստատ ապատեղեկատվություն էդքան շատ չեն տարածում: Այսինքն, իրենք մեզանից պահանջում են ստուգված նյութեր, մենք էլ ստուգված նյութեր ենք տալիս: Իրենք պատրաստ են սպասել ու կարդալ հիմնավոր բաներ: Իսկ երբ լսարանը պահանջում է տալ բռնություն ու էրոտիկա, դու ստիպված ես տալ, փոխկապակցված շղթա է:

(Մարիամ, Երևան)

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցները կարևորում են ապատեղեկատվության դեմ պայքարում լրագրողների դերը թեկուզ այն պատճառով, որ նրանք մասնակցում են համայնքների դպրոցներում մեդիագրագիտության ժամերին: Մյուս կողմից, մասնակիցներից մի քանիսը, երկու քննարկումների ժամանակ էլ, ընդգծում են մանկավարժների դերը մեդիագրագիտության խթանման հարցում:

Շատ մարդիկ, այդ թվում՝ մանկավարժները, օգտվում են կայքերից, [որոնց լուրերը] չունեն սկզբնաղբյուր: Սա մեծ խնդիր է, և հաճախ իրենք էլ դառնում են ապատեղեկատվություն տարածողներ:

(Անի, Շիրակ)

Խոսելով ապատեղեկատվություն տարածող հարթակների մասին՝ քննարկումների մասնակիցները կարծում են, որ պետք է միաժամանակ աշխատել նրանց գրագիտության և լսարանի մեդիագրագիտության բարձրացման վրա: Այս երկու լուծումները միասին են արտահայտված հետևյալ դիտարկման մեջ, որտեղ «ծորակի» փոխաբերությունը կարող է վերաբերել ինչպես մեդիային, այնպես էլ լսարանին:

Ինձ թվում է՝ մենք պիտի զուգահեռաբար լրագրողների հետ աշխատելիս աշխատենք նաև ընդհանուր մեդիագրագիտության բարձրացման վրա, որովհետև ապատեղեկատվություն [տարածողը] մեր միջոցով լսարանին տալիս է ինֆորմացիա՝ դրդելով անել որոշակի՝ իրենց համար ցանկալի գործողություններ, և դրան իրենք չեն կարող հասնել, եթե մեկ-երկու անգամ տեսնեն, որ մենք՝ որպես խողովակ, չենք աշխատում իրենց համար, մյուս կողմից ծորակը փակ է:

(Կարմեն, Երևան)

6.2 Լրացուցիչ ֆինանսավորում

Հարցման մասնակիցների 27%-ը երկրորդ առաջնահերթ լուծում է համարել լրացուցիչ ֆինանսավորումը: Ընդ որում, հակառակ մյուս տարբերակների, տիրապետող կարծիք չկա այն հարցում, թե արդյոք լրացուցիչ ֆինանսավորումը կբերի տեղեկությունների ստուգման պրակտիկայի բարելավման: Եթե միջոցների բացակայությունը այդ պրակտիկայի խոչընդոտ էր համարվել պատասխանների 10%-ում (տես Պատկեր 7.1), նույնքան մարդ դժվարանում է պատասխանել, թե արդյոք լրացուցիչ ֆինանսների առկայությունը կբարելավի դրությունը, մոտավորապես նույնքան մարդ էլ (12%) ամենապակաս առաջնահերթությունն է տվել այս լուծմանը:

Այս հարցի պարագայում որոշ տարբերություն է գրանցվել մարզային և մայրաքաղաքային մեդիայի աշխատողների պատասխաններում. ֆինանսավորումը որպես ամենաառաջնահերթ լուծում է դիտարկել երևանյան մեդիայի աշխատողների 41%-ը, մինչդեռ դրան նույնքան առաջնահերթություն տվել է մարզային աշխատողների միայն 12.5%-ը: Վերջիններիս 19%-ը ֆինանսավորմանը ամենաքիչ կարևորությունն է տվել առաջնահերթությունների հինգբալանոց սանդղակով:

Երևանյան ֆոկլուս-խմբային քննարկման ժամանակ, ի պատասխան այն հարցի, թե ինչ է պակասում խմբագրություններին՝ տեղեկությունների ստուգումը առօրյա աշխատանքի մաս դարձնելու համար, ֆինանսը հնչում է որպես առաջին պատասխան (երկրորդը՝ ժամանակակից տեխնիկա): Այնուամենայնիվ, այստեղ ևս պատասխանները միանշանակ չեն:

Մասնակիցներից ոմանք նշում են, որ տեղեկատվության հարցում ուղարկելը կամ «հասարակ հեռախոսներով» պատկեր ու տեսանյութ ստուգելը ֆինանսի հետ կապ չունեն: Մյուսները հակադարձում են, որ լավ մասնագետներ ունենալու համար ֆինանսական միջոցները կարևոր են: Հետաքրքրական է, որ խմբագրությունում տեղեկությունների ստուգումը մասնակիցները նախաառաջ պայմանավորում են առանձին մասնագետի ներկայությամբ, որը կտիրապետի բոլոր գործիքներին՝ խմբագրակազմին անհրաժեշտ տվյալները ստուգելու համար: Սա, նրանց խոսքով, կօգնի, որպեսզի նյութի որակը հրատապության պատճառով չտուժի:

Մարզային լրագրողները, մյուս կողմից, փաստերի ստուգումը հիմնականում պատկերացնում են ոչ թե հատուկ այդ գործում մասնագիտացած աշխատակցի հաստիքով, այլ որպես ամեն լրագրողի աշխատանքի բաղկացուցիչ մաս, «խմբագրական քաղաքականության հարց»:

*Եթե մի կառույց իր համար որդեգրում է կարևոր սկզբունք,
որ պիտի մանիուլյատիվ տեղեկություն չտարածի, չտարածի
ապատեղեկատվություն, չդառնա գործիք, քարոզչամիջոց, ես հարցերը
կարելի է հընթացս լուծել:*

(Արմենուհի, Շիրակ)

Քննարկման մասնակիցը կարծում է, որ թեև հաստիքի առկայությունը կարող է արդյունավետ լինել, հարցն ավելի ընդգրկուն է՝ որքանով է հեշտ գոյատևելը այն լրատվամիջոցների համար, որոնք մանիուլյատիվ տեղեկություն չեն տարածում և քաղաքական գործիք չեն դառնում:

Մարգային մեդիայի երկու այլ աշխատողներ նշում են, որ ինչպես անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելը, այնպես էլ ֆինանսական միջոցների ներգրավումը ընդհանրական լուծումներ լինել չեն կարող. նախ անհրաժեշտ է «խմբագրության հետաքրքրվածությունն ու պատրաստակամությունը», քաղաքական շահերով չառաջնորդվել:

Թե՛ մայրաքաղաքային, թե՛ մարգային մեդիայի աշխատողները համոզված են, որ խմբագրությունները կիրառարվեն գումար հատկացնել այսպիսի հաստիքի, քանի դեռ, ինչպես նշում է մարգային քննարկման մասնակիցը, դա չի արվում դրամաշնորհներով: Մարգային լրատվամիջոցների դեպքում ֆինանսական դժվարություն ունեն հատկապես հեռուստաընկերությունները, որոնք զրկվել են հեռարձման հնարավորությունից, բայց փորձում են պահել լրատվամիջոցները, օրինակ, համացանցային տիրույթում, փոքր խմբագրակազմով: Այսինքն, ֆինանսական միջոցների առկայության պարագայում առաջնահերթ կհամարվեն այլ կարիքներ, այդ թվում՝ մարդկային ռեսուրսների համալրումը: Ինչպես նշել է զրուցակիցներից մեկը՝ «Եթե [խմբագրությունում] ունես երեք հոգի, հաստատ մեկին չես կարող ասել՝ դու միայն զբաղվում ես փաստերի ստուգմամբ»:

Մարգային մեդիայի աշխատողները երկու այլընտրանք են առաջարկել: Դրանցից մեկը վերաբերում է «մեդիայի ինստիտուցիոնալ զարգացման ծրագրերին», որի համաձայն՝ ամեն խմբագրություն կունենա ռեսուրսներ իրեն անհրաժեշտ հմտությունների զարգացման համար՝ սեփական քաղաքականությանը համապատասխան. «Գուցե եթե դա ունենանք, կարողանանք դրանից մասհանում իրականացնել [առանձին] մասնագետ ունենալու համար»: Մյուս լուծումը վերաբերում է մասնագիտացած խմբեր ձևավորելուն:

*Եթե լրատվամիջոցը չի կարող ունենալ այդ հաստիքը, [թող] լինի
մասնագիտական խումբ կամ խմբեր, որոնք խորհրդակցական ձայնով
կկարողանան օգնել լրագրողներին:*

(Անի, Շիրակ)

*Կարող է լինել փաստերի ստուգման կլինիկայի նման մի բան,
օրինակ՝ ասոցացիա, դու էլ լինես ասոցացիայի անդամը: Կարելի
է ուղարկել, իրենք կենտրոնացված փաստի ստուգումը անեն (եթե
դա զուտ տեխնիկական է), դու էլ, որպես այդ ասոցացիայի անդամ,
պարբերաբար ինչ-որ հատկացումներ անես:*

(Սուսաննա, Սյունիք)

6.3 Տեխնոլոգիական լուծումներ

Տեխնոլոգիական լուծումը շատ առաջնահերթ է համարել հարցվածների 54%-ը, քիչ առաջնահերթ՝ 9%-ը: Պետք է նշել, որ այս լուծումը հարցի պատասխանների շարքում եղել է առաջինը:

Ֆոկուս-խմբային քննարկման ժամանակ մասնակիցները նախ թվարկել են այն ռեսուրսներն ու գործիքները, որոնցից օգտվում են, ապա նշել, թե ինչն է դժվար, ինչ այլընտրանքներ կցանկանային տեսնել:

Google-ը եղել է հիմնական գործիքը երկու քննարկումների պատասխաններում: Մասնակիցները նշել են նաև, որ օգտվում են Whois դոմեյնների փնտրման հարթակներից: Ինչպես նշվեց մեթոդների և ռեսուրսների բաժնում, մայրաքաղաքային քննարկման այն մասնակիցը, որը լավատեղյակ է եղել ռեսուրսների բազմազանությունից, չունի դրանք կիրառելու մեծ փորձ, իսկ կիրառության փորձ ունեցող մասնագետները տեղյակ են այդ կիրառությունների դժվարություններից, սակայն չգիտեն այլընտրանքային լուծումների և անհրաժեշտության դեպքում դրանցից օգտվելու հնարավորությունների մասին: Քննարկումները ցույց տվեցին նաև, որ շատերը ցանկանում են ամփոփ և հասկանալի կերպով ներկայացված տեսնել առկա ռեսուրսները: Այն, որ նման ձեռնարկներ կան, որոնց մասին նրանք քննարկմանը հայտնեցին, որ տեղյակ չեն, ցույց է տալիս նաև մասնագիտական հանրությանը դրանք ավելի արդյունավետորեն ներկայացնելու անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, այստեղ կներկայացվեն մի քանի դժվարություններ, որոնք քննարկման մասնակիցները կապել են իրենց օգտագործած գործիքների ու հարթակների հետ: Նրանցից մեկը, խոսելով Fake Image Detector ռեսուրսի մասին, նշել է, որ այն ծանր է և անհարմար՝ նկարների իսկությունը արագորեն ստուգելու համար: Նույն մասնակիցը հայտնել է, որ կուզեր տեսնել ավելի շատ օֆլայն ռեժիմում աշխատող ռեսուրսներ, օրինակ՝ տեղեկությունները ստուգող հարթակներ կամ էլեկտրոնային քարտեզներ:

Ակնկալվող լուծումների համար նաև նշվում է դրանց հասանելի լինելը, որը կաշխատի «թեկուզ ոչ շատ փայլուն հեռախոսների և համակարգիչների համար» և մատչելի կլինի տեղեկությունն անձամբ ստուգել ցանկացող ամեն մի լրագրողի համար:

Քննարկումների ժամանակ ներկայացվել են տեխնոլոգիաների հետ աշխատանքի ևս երկու դժվարություն՝ որոնման համակարգերով տեսանյութի սկզբնաղբյուրի հայտնաբերում և, վերջին մի քանի իրադարձությունների օրինակով³, ձայնագրությունների իսկությունը ստուգող հարթակների իմացություն:

Մայրաքաղաքային մեդիայի ներկայացուցիչները համեմատաբար ավելի շատ գործիքներ են կիրառում տեղեկությունները ստուգելիս: Նրանցից մեկի խոսքով՝ թեև դրանք սպառիչ միջոցներ չեն, գործիքները «գործելու ազատություն են տալիս»: Մարզային մեդիայի ներկայացուցիչները, ինչպես ավելի վաղ նշվեց, տեղեկություններ ստուգելիս նախևառաջ դիմում են պաշտոնական աղբյուրներին և փաստաթղթերի ուսումնասիրությանը: Թեև չենք կարող ընդհանրացնել, մարզային մեդիայի ներկայացուցիչներից երկուսը նշել են, որ տեխնոլոգիական լուծումների համեմատ նախընտրում են ստուգման ավանդական մեթոդները՝ փաստաթղթերի ստուգում, հղումներ օրենքների, մասնագետների հետ զրույցներ, հետազոտությունների ուսումնասիրություն, ականատեսների վկայություն: Չնայած

³ Օրինակներից վերջինը վերաբերել է Ավետիք Չալաբյանի զրույցի և Վոլոդիմիր Չելենսկու փոփոխված խոսքի դեպքերին, ապա՝ «ՍԱՍ»-ում և Արմեն Չարչյանի մասնակցությամբ ժողովների ձայնագրություններին, ԱԳԾ և Քննչական ծառայության նախկին ղեկավարների զրույցի գաղտնալսմանը:

գործիքներին ծանոթացել է սեմինարների ժամանակ և կիրառել՝ քննարկման մասնակիցներից մեկը նշել է, որ տեխնիկային վստահել չի կարող, «չունեմ հավատ, որ դրանք կարող են հարյուր տոկոսով ճշգրտաձ տեղեկություն տալ ինձ»: Որտեղ հնարավոր է, նախընտրում է մասնագիտական եզրակացությունները, ինչպես լուսանկարների ստուգման ժամանակ:

6.4 Կարգավորումներ

Ֆոկուս-խմբային քննարկումների որոշ մասնակիցների կողմից տարատեսակ կարգավորումները որպես լուծում առաջարկելը պատասխան է միտումնավոր ապատեղեկատվության՝ վերը նշված դեպքերին: Այս հարցում, սակայն, համաձայնություն չի արտահայտվել:

Մասնակիցներից մեկը կարևոր է համարում տեղեկություն տարածող հարթակների նույնականացումը, որպեսզի վերջիններս չկարողանան այլոց մասին ապատեղեկատվություն տարածել և մնալ անպատիժ: Սրա ուղիներից մեկը, ըստ նրա, լրատվամիջոցների համար գործունեություն ծավալելու խիստ կանոններ մշակելն է: Ճշտված տեղեկություններ հայտնելու պարտավորությունը, նրա կարծիքով, պետք է լինի այն նախապայմաններից մեկը, որը բավարարելու դեպքում միայն որևէ հարթակ կարող է ճանաչվել լրատվամիջոց:

Մեկ այլ մասնակից օրենսդրական կարգավորմանը զուգահեռ առաջարկում է «ընդհանուր մի վարքականոնի, լրագրողական համերաշխության խմբի ձևավորումը, որի տակ բոլորը կստորագրեն», թեև վստահ է, որ ինքնակարգավորման այս մեխանիզմը չի գործի, կմիանան միայն մի քանի հայտնի լրատվամիջոցներ: Ինքնակարգավորման մյուս առաջարկը վերաբերում է «լրագրողական կազմակերպություններում օմբուդսմենի ինստիտուտի զարգացմանը»:

Վերջապես, նշվել են նաև ապատեղեկատվության դեմ տեխնիկական միջոցներով պայքարելու առաջարկներ, օրինակ՝ կեղծ տեղեկություն տարածած կայքից տեքստ պատճենելու գործառույթի արգելափակումը: Նման լուծումները, սակայն, ոչ միայն շատ լայն են և անորոշ, այլև, ինչպես հակադարձում են քննարկումների այլ մասնակիցներ, հեշտորեն կարող են չարաշահվել իշխանությունների կողմից:

7 Եզրակացություններ և առաջարկներ

7.1 Եզրակացություններ

Այս հետազոտության նպատակն էր տեղեկությունների ստուգման և ապատեղեկատվության հետ աշխատանքի՝ մեդիա աշխատողների կարիքներին ծանոթանալը: Հետազոտության թիրախային խումբը ներառել է ոչ միայն լրագրության ոլորտի աշխատողներին, այլև ընդհանրապես բովանդակություն ստեղծող անհատներին ու կազմակերպություններին: Նրանց շրջանում նախ անցկացրել ենք ինտերնետային հարցում, ապա ֆոկուս-խմբային քննարկումների և հարցազրույցների միջոցով փորձել ենք իմանալ մարզային և մայրաքաղաքային մեդիայի կարիքների մանրամասները: Վերլուծությունը հիմնվել է հարցման 122 պատասխանների և 14 մասնագետների խորքային դիտարկումների վրա:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ մեդիա աշխատողների մեծամասնությունը ամեն օր առնչվում է ստուգման ենթակա տեղեկությունների հետ: Ընդ որում, մայրաքաղաքային մեդիայի ներկայացուցիչներն ավելի հաճախ են գործ ունենում նման բովանդակության հետ, քան մարզային մեդիայի աշխատողները (ամեն օր՝ 66% և 52%): Հետազոտության մասնակիցների մեծամասնության կարծիքով՝ ապատեղեկատվության տարածումը վնասում է մեդիայի հեղինակությունը: Նրանք ապատեղեկատվությունը մարտահրավեր են համարում մեդիայի համար, որովհետև այն զբաղեցնում է իրենց աշխատանքային ժամանակը և ավելի մեծ արագությամբ է տարածվում, քան դրանց հերքումներն ու ստուգված տեղեկություններն ընդհանրապես: Պակաս հավանության են արժանացել պնդումներն այն մասին, որ ՉԼՄ-ն կիսում է պատասխանատվությունը ապատեղեկատվություն տարածելիս և որ փաստերի ստուգումը բարձրացնում է մեդիայի հանդեպ լսարանի վստահությունը:

Թեև ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցները համակարծիք են եղել տեղեկությունների ստուգման օգուտների, այդ թվում՝ լսարանի վստահությունը շահելու հարցում, նրանք նշել են այն դժվարությունները, որոնք կապված են այդ աշխատանքի հետ: Հիմնական խնդիրներից մեկը, որ նշվել է քննարկումների տարբեր հատվածներում, լրատվության օպերատիվության պահանջն է: Սա, ըստ մասնագետների, խոչընդոտում է տեղեկությունների ստուգման գործին, քանի որ վերջինս հաճախ ժամանակատար է և ստուգված տեղեկություններ հաղորդողներին դուրս է թողնում մրցակցությունից: Օպերատիվության պահանջը փաստերի ստուգման հիմնական խոչընդոտն է համարվել նաև հարցման արդյունքներում, հատկապես մայրաքաղաքային մեդիայի ներկայացուցիչների կողմից:

Մյուս հիմնական դժվարությունը կապվել է տեղեկությունների ստուգման համար անհրաժեշտ գիտելիքի և հմտությունների պակասի հետ: Սա երրորդ հիմնական խոչընդոտն էր համարել հարցվածները, իսկ ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցների մեծ մասը նշել են, որ գիտեն անհրաժեշտ ռեսուրսների առկայության մասին, սակայն դրանց կիրառության մանրամասներին ծանոթ չեն և կուզեին ավելին իմանալ: Հատկապես մեծ է եղել հետաքրքրությունը առցանց գործիքների և լուսանկարներ ու տեսանյութեր ստուգող հարթակների հանդեպ, որոնցից հարցվածները թեև օգտվում են, բայց կուզեին ավելի սովորել: Ինչ վերաբերում է այդ գիտելիքի ու հմտությունների ձեռքբերման հիմնական միջոցներից մեկին՝ կարճատև սեմինարներին մասնակցությանը, լրագրողները նշել են, որ գոհ չեն այդ հարցում խմբագրությունների հետաքրքրվածությունից և նախաձեռնողականությունից: Առաջարկ է եղել հեռավար դասընթացներ անցկացնելու մասին, ինչը կարող է ավելի շատ մասնագետների հասնել:

Մեդիա աշխատողները տեղեկությունների ստուգման ժամանակատարությունը մասամբ կապել են Հայաստանում պետական կառույցների աշխատանքի հետ, որը Նշվել է որպես արժանահավատ բովանդակության հաղորդման մեկ այլ մեծ խոչընդոտ: Սրանով նրանք հղել են ոչ միայն բևեռացված քաղաքական միջավայրին ու դրանում մեդիայի օժանդակ դերին, այլև այն բյուրոկրատական խոչընդոտներին, որոնք ուշացնում են տեղեկությունների ստուգումն ու նպաստում ապատեղեկատվության տարածմանը:

Վերջապես, մեդիայի ներկայացուցիչները կարևոր խնդիր են համարել մասնագիտական այն միջավայրը, որում գրեթե անհնար է դառնում ստուգված տեղեկություններ հաղորդել: Նշվել են այնպիսի օրինակներ, ինչպես լրագրողներից օրական հրապարակումների որոշակի քանակություն պահանջելը, ունիվերսալ մասնագիտական պարտականություններ ակնկալելը և ընդհանրապես անկախ մեդիայի գոյության հնարավորությունը:

Նշված խնդիրների լուծման հիմնական միջոցներ են համարվել լսարանի մեդիագրագիտության և լրագրողական համայնքի գրագիտության խթանումը, լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելը, այդ թվում՝ տեղեկություններ ստուգող մասնագետի հաստիքի նախատեսումը, ինչպես նաև տեխնոլոգիական հնարավորությունների զարգացումը, տեղեկությունների ստեղծման ու հաղորդման աշխատանքը այս կամ այն կերպ կարգավորելը:

Հետազոտության մասնակիցների այս դիտարկումները հաշվի առնելով՝ հաջորդ բաժնում կներկայացնենք տեղեկությունների ստուգման պրակտիկայի բարելավման հնարավոր լուծումների մի քանի առաջարկներ: Մինչ այդ, հարկ է նշել, որ հետազոտության արդյունքներում առանցքային է եղել ժամանակի հարցը. տեղեկությունների ստուգման հնարավորության հարցը հաճախ հենց ժամանակի հետ է կապվել: Դրանով են պայմանավորվել ոչ միայն պատճառները, այլև լուծումները: Նշվել է, օրինակ, որ տեխնոլոգիաները և ֆինանսը կօգնեն լուծել ժամանակի խոչընդոտը, իսկ լսարանի մեդիագրագիտությունն ու դասընթացներին՝ լրագրողների մասնակցությունը նկարագրվել են որպես «երկարաժամկետ» լուծումներ: Ուրեմն, լուծումների մշակման ընթացքում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նրան, թե ինչպես են դրանք առնչվում ժամանակի հարցին՝ ինչպես են օգնում տեղեկությունների ստուգման ժամանակը դարձնել ավելի արդյունավետ և որքանով են կայուն՝ ընդհանուր խնդիրը լուծելու համար:

7.2 Առաջարկներ

Ստորև կներկայացնենք տեղեկությունների ստուգման աշխատանքի բարելավման մի քանի առաջարկներ, որոնք կարող են օգնել հետազոտությանը մասնակցած մեդիա աշխատողների ներկայացրած խնդիրների հաղթահարմանը, այդ թվում՝ տեխնոլոգիական լուծումների միջոցով:

Գիտելիքի և հմտությունների տարածում

- Ֆոկուս-խմբային քննարկումները ցույց տվեցին, որ տեղեկությունների ստուգման հիմնական խոչընդոտներից մեկը առկա ռեսուրսների իմացության պակասն է մասնագետների շրջանում: Նույնիսկ տեխնոլոգիական դժվարությունների մի մասը, որոնք ներկայացվել են խմբային քննարկումներում, կապված են առանձին խնդիրներ լուծող ռեսուրսների ու դրանց այլընտրանքների հնարավորությունների մասին գիտելիքների պակասի հետ: Մյուս կողմից, հարցման և քննարկումների մասնակիցները ցանկություն են հայտնել ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Ելնելով սրանից՝ կարելի է պլանավորել անհրաժեշտ գիտելիքի տարածման արդյունավետ միջոցներ, օրինակ՝ առցանց դասընթացներ (որոնց արդյունավետությունը լրացուցիչ գնահատման կարիք կունենա):

Միաժամանակ, կարևոր է խմբագիրներին ու ղեկավարությանը այս գիտելիքի կարևորությունը ներկայացնելը, որպեսզի մեղիա աշխատողները ստիպված չլինեն դասընթացներին մասնակցել իրենց ազատ ժամանակի հաշվին:

- Հաշվի առնելով այն, որ տեղեկությունների ստուգման մասին հայալեզու ձեռնարկներ կան, և ինչպես ցույց տվեց հետազոտությունը՝ քննարկումների և հարցման մասնակիցները ոչ միշտ են տեղյակ դրանցից, մեկ այլ լուծում կարող է լինել առկա ձեռնարկների և ուղեցույցների թիրախային տարածումը:
- Վերջապես, կարելի է ստեղծել տեղեկությունների ստուգման ռեսուրսների (գործիքների, հարթակների, հավելվածների) մի ինտերակտիվ և մշտապես թարմացվող շտեմարան, որը հնարավոր կլինի ֆիլտրել և արագորեն ստանալ տվյալ իրադրության համար ամենից տեղին ռեսուրսների ցանկը և դրանց հղումները: Արդյունքներում կարող են ներառված լինել այնպիսի մանրամասներ, ինչպես ամեն մի ռեսուրսի առավելություններն ու թերությունները, կիրառության հնարավոր սցենարները, սարքավորումների և օպերացիոն համակարգերի հետ համատեղելիությունը: Առանձին հատկանիշների հիմքով ռեսուրսների խմբավորման հնարավորությունը մեղիա աշխատողներին թույլ կտա գտնել իրենց կարիքներին համապատասխան աղբյուրներ (ինչպես հասանելի, մատչելի, թեթև, օֆլայն ծրագրերը՝ քննարկման մասնակիցների պարագայում)՝ այդպես խնայելով տեղեկությունների ստուգմանը հատկացվող ժամանակը:

Տեխնոլոգիական լուծումներ

- Հնարավորության դեպքում կարելի է մշակել տեխնոլոգիական մի լուծում, որը տեղեկության ավտոմատ որոնման միջոցով կճանաչի կեղծ կամ առնվազն ստուգման ենթակա տեղեկությունը և կազդարարի այդ մասին: Այս լուծումը (օրինակ՝ զննարկիչի հավելված/extension) կարող է օգտագործվել՝ հրապարակվելիք նյութերը ստուգման ենթարկելու նպատակով, որի ժամանակ կարող են պարզվել փաստական անճշտությունները: Բացի այդ, ազդարարումը լրացուցիչ խոչընդոտ կդառնա ապատեղեկատվության տարածման ճանապարհին: (Այս լուծման առաջարկի համար նախատիպ են արհեստական բանականության այնպիսի կիրառություններ, ինչպես էլեկտրոնային փոստերի՝ spam ճանաչելու և պիտակավորելու հնարավորությունը կամ Datamir⁵ ռեսուրսի՝ խմբագրությունների համար առաջարկվող լուծումը:)
- Հաշվի առնելով քննարկումները հերքումների անարդյունավետության, ապատեղեկատվության համեմատ դրանց նվազ տարածման մասին՝ կարելի է մշակել այնպիսի տեխնոլոգիական ձևեր, որոնցով ստուգված տեղեկությունն ավելի թիրախային ձևով կհասնի ապատեղեկատվությունը սպառած լսարանին: Թեև հետազոտության ժամանակ այս հարցը չի քննարկվել, կարելի է դիտարկել, որ ապատեղեկատվության դեպքերը և դրանց հիմքում եղած փաստերի ստուգման հետահայաց հրապարակումները սովորաբար լինում են երկու անջատ միավորներ՝ իրենց առանձին լսարաններով: Հետևաբար, պետք կլինի մտածել այնպիսի ձևեր, որոնք հնարավոր կդարձնեն ապատեղեկատվություն սպառած լսարանի հանդիպումը ստուգված փաստերի հետ: Ստույգ տարբերակների առաջարկը մեր կարողություններից դուրս է, բայց հնարավոր մի տարբերակ կարող է լինել cache-երից օգտվելը՝ պահպանելով տվյալների օգտագործման պայմանները:
- Տեխնոլոգիական մեկ այլ լուծմամբ կարելի է տեղայնացնել/հայաֆիկացնել ամենակիրառական այն ռեսուրսները, որոնց տեղական օգտագործման համար լեզվի հարցը կարող է խոչընդոտ լինել: Նմանապես, կարելի է թարգմանել որևէ ծրագրի օգտագործման ցուցումները/ձեռնարկները, հուշումներն այն մասին, թե ինչպես ճանաչել պատկերի ֆայլում արված փոփոխությունները, և այլն:

⁵ տես datamir.com/news

Խմբագրական և մասնագիտական նախաձեռնություններ

- Ապատեղեկատվության տարածումը զսպելու գործում մեդիայի դերի փորձված օրինակներից է հին հոդվածների տեքստից առաջ հրապարակման ժամանակն ընդգծելը (տես, օրինակ, TheGuardian)⁶: Քանի որ ապատեղեկատվության մի որոշ հատված հնարավոր է դառնում հենց հին լուրերը նորի տեղ ներկայացնելով, նման մոտեցումը կարող է կրճատել ապատեղեկատվության դեպքերը: Այդ նպատակով կարելի է համագործակցել հայաստանյան մեդիայի խմբագիրների հետ՝ արևմտյան մեդիայում լայն կիրառություն ունեցող այս պրակտիկան (և հնարավոր այլ պրակտիկաներ) տեղայնացնելու համար:
- Վերջապես, հաշվի առնելով հետազոտության մասնակիցների կողմից մասնագիտական օգնության կարևորությունն ընդգծելը, առաջարկում ենք ստեղծել տեղեկությունների ստուգման մեջ հմտացած մեդիա աշխատողների մի ցանց և նախատեսել ֆինանսական միջոցներ՝ մյուսների համար նրանց հասանելիությունն ապահովելու համար: Սա խմբագրություններին թույլ կտա խուսափել չճշտված տեղեկություններ հաղորդելուց՝ վստահ լինելով, որ կան այդ գործում իրենց օգնելու պատրաստ գործընկերներ (թեև պետք է ուշադիր լինել, որպեսզի այս հնարավորությունը չկանխի մյուս՝ գիտելիք և հմտություններ ձեռք բերելու անհրաժեշտությունը):
- Որպես լրացում այս առաջարկին՝ կարելի է դիտարկել մեկ այլ ցանցի գոյությունը՝ կազմված տարբեր ոլորտների մասնագետներից, որոնք պատրաստակամ կլինեն անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն տրամադրել նեղ մասնագիտական հարցերի մասին կամ մասնակցել փաստերի ստուգման ընթացքին՝ այդպիսով մեղմելով տեղական նյութի հետ աշխատող ռեսուրսների պակասությունը:

⁶ տես <https://www.poynter.org/ethics-trust/2022/news-orgs-mark-old-articles-disclaimer>

Հավելվածներ

Հավելված 1. Հարցաթերթ

Տեղեկությունների ստուգում. կարծիքներ և կարիքներ

* 1. Նշվածներից ո՞րն է բնութագրում Ձեր աշխատանքը

- ☐ Լրագրող
- ☐ Խմբագիր
- ☐ Հաղորդավար
- ☐ Ֆոտոլրագրող
- ☐ Օպերատոր/մոնիտաժող
- ☐ Բլոգեր
- ☐ Սոցիալական մեդիայի պատասխանատու
- ☐ Այլ (նշեք)

* 2. Ո՞րն է Ձեր գործունեության հիմնական վայրը

- ☐ Արագածոտն
- ☐ Արարատ
- ☐ Արմավիր
- ☐ Գեղարքունիք
- ☐ Կոտայք
- ☐ Լոռի
- ☐ Շիրակ
- ☐ Սյունիք
- ☐ Տավուշ
- ☐ Վայոց ձոր
- ☐ Երևան

* 3. Ո՞ր տարիքային խումբն եք ներկայացնում

- ☐ Մինչև 24
- ☐ 25-34
- ☐ 35-50
- ☐ 51-65
- ☐ 66-ից բարձր

* 4. Նշեք Ձեր սեռը

- ☐ Իգական
- ☐ Արական

* 5. Ի՞նչ կրթություն եք ստացել

- ☐ Միջնակարգ (կամ թերի միջնակարգ)
- ☐ Միջին մասնագիտական
- ☐ Թերի բարձրագույն
- ☐ Բարձրագույն (բակալավր, մագիստրոս)
- ☐ Հետբուհական (ասպիրանտ, հայցորդ...)

* 6. Որքա՞ն ժամանակ եք աշխատում մեդիայի ոլորտում (չհաշված մասնագիտական կրթության տարիները)

- ☐ Մինչև 1 տարի
- ☐ 1-3 տարի
- ☐ 4-10 տարի
- ☐ 10 տարուց ավելի

* 7. Ձեր մասնագիտական գործունեության ընթացքում ի՞նչ հաճախականությամբ եք առնչվում ստուգման ենթակա տեղեկությունների հետ

- ☐ Ամեն օր
- ☐ Ամեն շաբաթ
- ☐ Ամեն ամիս
- ☐ Հազվադեպ
- ☐ Երբեք
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

* 8. Համաձայ՞ն եք այս պնդումների հետ

	Բոլորովին համաձայն չեմ	Համաձայն չեմ	Դժվարանում եմ պատասխանել	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
Ապատեղեկատվությունը լուրջ մարտահրավեր է մեդիայի համար	☐	☐	☐	☐	☐
Ապատեղեկատվության տարածումը վնասում է մեդիայի հեղինակությանը	☐	☐	☐	☐	☐
ՉԼՄ-ն կիսում է պատասխանատվությունը ապատեղեկատվություն տարածելիս	☐	☐	☐	☐	☐
Փաստերի ստուգումը բարձրացնում է մեդիայի հանդեպ լսարանի վստահությունը	☐	☐	☐	☐	☐

9. Ձեր լրատվամիջոցը / կազմակերպությունն ունի՞ փաստերի ստուգման ուղեցույց

- ☐ Այո
- ☐ Ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

*** 10. Որքանիս հաճախ եք կիրառում այս մեթոդներն ու ռեսուրսները տեղեկությունը ստուգելու համար (ԴՊ = Դժվարանում եմ պատասխանել)**

	Երբեք	Երբեմն	Միշտ	ԴՊ
Այցելություն վստահելի կայքեր	☐	☐	☐	☐
Գրավոր հարցում	☐	☐	☐	☐
Չանգ տեղեկության մեջ նշված մարդկանց և հաստատություններ	☐	☐	☐	☐
Տեղեկության ճշտում առնվազն երկու աղբյուրից	☐	☐	☐	☐
Գործընկերների օգնություն	☐	☐	☐	☐
Ընդլայնված որոնում համացանցում	☐	☐	☐	☐
Տվյալների բաց շտեմարաններ	☐	☐	☐	☐
Պաշտոնական ռեզիստրներ	☐	☐	☐	☐
Լուսանկարի աղբյուրը կամ իսկությունը ստուգող հարթակներ	☐	☐	☐	☐
Տեսանյութի աղբյուրը կամ իսկությունը ստուգող հարթակներ	☐	☐	☐	☐
Մարդկանց ինքնությունը ստուգող հարթակներ	☐	☐	☐	☐
Սոցցանցերի օգտահաշիվները ստուգող հարթակներ	☐	☐	☐	☐
Կայքերի տվյալները ստուգող հարթակներ	☐	☐	☐	☐
Առցանց քարտեզներ	☐	☐	☐	☐
Փաստերի ստուգման մեջ մասնագիտացած հայաստանյան հարթակներ	☐	☐	☐	☐
Փաստերի ստուգման մեջ մասնագիտացած արտասահմանյան հարթակներ	☐	☐	☐	☐
Փաստերի ստուգման ձեռնարկներ հայերենով	☐	☐	☐	☐
Փաստերի ստուգման ձեռնարկներ այլ լեզուներով	☐	☐	☐	☐

*** 11. Եթե հրապարակման համար տեղեկություն եք ստանում լսարանից կամ սոցիալական մեդիայից սովորաբար ի՞նչ եք անում՝ մինչև հրապարակելը**

- ☐ Անմիջապես հրապարակում եմ՝ նշելով աղբյուրը
- ☐ Հրապարակում եմ՝ առանց ստուգելու և առանց աղբյուրը նշելու
- ☐ Ուշադրություն եմ դարձնում էլեկտրոնային փոստի հասցեին
- ☐ Ստուգում եմ օգտատիրոջ էջի մանրամասները
- ☐ Կապվում եմ նամակի հեղինակի կամ օգտատիրոջ հետ
- ☐ Ստուգում եմ տեղեկությունը այլ աղբյուրներից
- ☐ Դժվարանում եմ պատասխանել
- ☐ Այլ (նշեք)

*** 12. Անձանոթ կայքերից տեղեկություններ վերցնելիս ինչի՞ն եք ուշադրություն դարձնում՝ նախքան այդ աղբյուրին վստահելը**

- ☐ Կայքի հղմանը (URL)
- ☐ «Մեր մասին» բաժնին (կամ դրա բացակայությանը)
- ☐ Գովազդների քանակին և ծավալին
- ☐ Կայքի դիզայնին
- ☐ Այլ նյութերի վերնագրերին
- ☐ Կոնկրետ նյութում օգտագործված հղումներին
- ☐ Կայքի մասին բաց աղբյուրներում հրապարակված տվյալներին
- ☐ Նշվածներից ոչ մեկին
- ☐ Այլ (նշեք)

* 13. **Նշեք տեղեկությունների ստուգման աշխատանքի ամենադժվար մասը/ մասերը**

- ☐ Ստուգման ենթակա տեղեկությունը տարբերակելը
 - ☐ Համացանցում արդյունավետ որոնում անելը
 - ☐ Թվային բովանդակություն (օր.՝ լուսանկարներ և տեսանյութեր) ստուգելը
 - ☐ Առցանց քարտեզների հետ աշխատելը
 - ☐ Համապատասխան փորձագետների գտնելը
 - ☐ Վիճակագրական տվյալներ գտնելը
 - ☐ Տեղեկությունը տնօրինողից պարզաբանում ստանալը
 - ☐ Դժվարանում եմ պատասխանել
 - ☐ Այլ (նշեք)
-

* 14. **Ձեր կարծիքով, ո՞րն է տեղեկությունները ստուգելու հիմնական խոչընդոտը**

- ☐ Օպերատիվության պահանջը
 - ☐ Հմտությունների պակասը
 - ☐ Առկա գործիքների հետ աշխատելու դժվարությունը
 - ☐ Տեղական/հայալեզու բովանդակությունը ստուգող գործիքների և հարթակների պակասը
 - ☐ Ֆինսանական միջոցների անբավարարությունը
 - ☐ Լսարանից նման ակնկալիքի բացակայությունը
 - ☐ Խմբագրությունում նման պահանջի բացակայությունը
 - ☐ Ոչ բավարար խմբագրական անկախությունը
 - ☐ Դժվարանում եմ պատասխանել
 - ☐ Այլ (նշեք)
-

* 15. **Մասնակցե՞լ եք որևէ դասընթացի, սեմինարի, վերապատրաստման՝ նվիրված ապատեղեկատվությունը ճանաչելուն և ստուգելուն**

- ☐ Այո
- ☐ Ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

* 16. **Նշվածներից որի՞ մասին կցանկանայիք ավելի շատ գիտելիք ձեռք բերել**

(կարող եք ընտրել մի քանի տարբերակ)

- ☐ Ինչպես տարբերակել ստուգման ենթակա տեղեկությունը
 - ☐ Ինչպես արդյունավետորեն տեղեկություն որոնել համացանցում
 - ☐ Ինչպես օգտվել տեղեկության բաց աղբյուրներից և պաշտոնական ռեզիստրներից
 - ☐ Ինչպես ստուգել թվային բովանդակության իսկությունը (լուսանկար, տեսանյութ եւ այլն)
 - ☐ Ինչպես աշխատել քարտեզների հետ
 - ☐ Ինչ էթիկական հարցեր կարող են առաջանալ տեղեկությունները ստուգելիս և հրապարակելիս
 - ☐ Ում դիմել, եթե տեղեկությունը ստուգելիս օգնության կարիք ունեմ
 - ☐ Դժվարանում եմ պատասխանել
 - ☐ Այլ (նշեք)
-

- * 17. Ըստ առաջնահերթության, նշեք այն լուծումները, որոնք Ձեր կարծիքով կբարելավեն տեղեկությունների ստուգման պրակտիկան հայաստանյան մեդիայում

(որտեղ 5-ը ամենաառաջնահերթն է

1=Դժվարանում եմ պատասխանել)

	1	2	3	4	5	ԴՊ
Տեխնոլոգիական լուծումներ (օր.՝ ստուգման ավտոմատացում)	☐	☐	☐	☐	☐	☐
Առկա գործիքների ու հարթակների տեղայնացում /հայաֆիկացում	☐	☐	☐	☐	☐	☐
Լրագրողական համայնքի համատեղ աշխատանք	☐	☐	☐	☐	☐	☐
Քննադատական մտածողության զարգացում	☐	☐	☐	☐	☐	☐
Լրացուցիչ ֆինանսավորում	☐	☐	☐	☐	☐	☐
Տեղեկության ստուգման հմտությունների ուսուցանում բուհերում	☐	☐	☐	☐	☐	☐
Կարճատև սեմինարներ	☐	☐	☐	☐	☐	☐
Երկարատև աշխատարաններ (workshop)	☐	☐	☐	☐	☐	☐
Լսարանի կողմից նման պահանջի ձևավորում	☐	☐	☐	☐	☐	☐

18. Նախորդ հարցում չնշված լուծումների համար

Մինչ ավարտելը խնդրում ենք պատասխանել մի քանի հարցի Ձեր և Ձեր կազմակերպության գործունեության մասին

- * 19. Մեդիայի ո՞ր տեսակն էք ներկայացնում

- ☐ Տպագիր պարբերական
☐ Առցանց մեդիա
☐ Հեռուստատեսություն
☐ Ռադիո
☐ Այլ (նշեք)

- * 20. Հիմնականում ի՞նչ բովանդակություն է ստեղծում Ձեր լրատվամիջոցը/ կազմակերպությունը

- ☐ Լուրեր
☐ Թեմատիկ հոդվածներ
☐ Վերլուծական նյութեր
☐ Հետաքննություններ
☐ Փաստերի ստուգում (այդ թվում՝ որպես ենթաբաժին)
☐ Մարդկային պատմություններ
☐ Դժվարանում եմ պատասխանել
☐ Այլ (նշեք)

* 21. **Նշվածներից ո՞րն է Ձեր լրատվամիջոցի / կազմակերպության առաջնային լսարանը**

- ☐ Կոնկրետ բնակավայրի (մարզ/քաղաք) բնակիչները
 - ☐ Երիտասարդները
 - ☐ Կանայք
 - ☐ Երեխաները
 - ☐ Կոնկրետ մասնագիտության կամ զբաղմունքի ներկայացուցիչները
 - ☐ Ազգային փոքրամասնությունները
 - ☐ Լայն հասարակությունը
 - ☐ Դժվարանում եմ պատասխանել
 - ☐ Այլ (նշեք)
-

* 22. **Հիմնականում ի՞նչ նյութի հետ եք աշխատում**

- ☐ Տեքստ
 - ☐ Լուսանկար
 - ☐ Տեսանյութ
 - ☐ Ձայն
 - ☐ Այլ (նշեք)
-

* 23. **Նշեք , թե հիմնականում ինչ թեմա(ներ) եք լուսաբանում:**

- ☐ Զաղաքականություն
 - ☐ Տնտեսություն/բիզնես
 - ☐ Սոցիալական թեմաներ
 - ☐ Իրավական թեմաներ
 - ☐ Ռազմական թեմաներ
 - ☐ Առողջապահություն
 - ☐ Շրջակա միջավայր
 - ☐ Կրթություն/գիտություն
 - ☐ Մշակույթ
 - ☐ Տեխնոլոգիաներ
 - ☐ Սպորտ
 - ☐ Եղանակ
 - ☐ Ժամանց
 - ☐ Այլ (նշեք)
-

24. **Այս հարցման արդյունքները ամփոփելուց հետո մենք կկազմակերպենք ֆոկլուս-խմբային քննարկում մեդիայի ներկայացուցիչների մի քանի խմբերի հետ, որպեսզի ավելի լավ հասկանանք նրանց կարիքները կեղծ կամ կասկածելի տեղեկության հետ աշխատելիս: Եթե համաձայն եք մասնակցել այդ քննարկումներից մեկին , մանրամասների համար խնդրում ենք թողնել Ձեր կոնտակտային տվյալները: Եթե ոչ , պարզապես հաստատեք Ձեր պատասխանները :**
Շնորհակալություն մասնակցության համար:

Անուն _____

Էլեկտրոնային հասցե _____

Հեռախոսահամար _____

25. **Մեկնաբանությունների համար**

Հավելված 2. Ֆոկուս-խմբային քննարկումների հարցաշար

Տեղեկություններ ստուգելու և ապատեղեկատվության հետ աշխատելու մեդիա աշխատողների կարիքները

[Ներկայանալ]

[Ներկայացնել հետազոտության թեման և նպատակները]

[Ներկայացնել քննարկման ընթացքին առնչվող մի քանի պայմաններ]։

- խոսելու կարգը և յուրաքանչյուրին լսելու պայմանը
- միմյանց հետ զրույցի կարևորությունը, մոդերատորի դերը
- քննարկումը ձայնագրելու [Zoom-ի դեպքում տեսագրելու] հանգամանքը
- անանունությունը արդյունքները ներկայացնելիս (կամ միայն անվան առաջին մասը)

[Մասնակիցներին խնդրել ներկայանալ. տեղեկությունների ստուգման ի՞նչ փորձառություն ունեն]

[Ենթահարցերը՝ ըստ անհրաժեշտության]

1. Ո՞րն է ձեզ հանդիպած վերջին ապատեղեկատվությունը:

- ☐ Փորձե՞լ եք այն ստուգել:
- ☐ Եթե ոչ՝ ինչո՞ւ:

2. Ձեր կարծիքով, ի՞նչ տեղ ունի ապատեղեկատվությունը մեդիայի **մարտահրավերների** շարքում: Որքանո՞վ է կարևոր դրա դեմ պայքարը:

- ☐ Ինչո՞ւ է առաջնային, ինչո՞ւ՝ երկրորդական:

3. Ի՞նչ եք կարծում, մեդիան **պարտավո՞ր է** ստուգել տեղեկությունը տարածելուց առաջ, թե պետք է թողնել դա յուրաքանչյուր մեդիայի **նպատակահարմարությանը**:

- ☐ Ինչո՞ւ:

4. Ի՞նչ կասեք չստուգված կամ կեղծ տեղեկություն տարածելու **պատասխանատվության մասին**: Պատասխանատու՞ է այն հարթակը, որը տարածել է չճշտված տեղեկություն, թեկուզ առանց դիտավորության:

5. Ի՞նչ **առավելություններ** է տալիս (կամ կարող է տալ) փաստերի ստուգումը խմբագրություններին:

6. Ի՞նչ է **արժեքնում** փաստերի ստուգումը խմբագրությունների համար: Որքանո՞վ է իրատեսական բավարար մարդկային և նյութական ռեսուրսների ներգրավումը այդ նպատակի համար:

7. Որքանո՞վ է տեղեկությունները ստուգելու գործընթացը **ժամանակատար** ձեզ համար: Հատկապես ի՞նչն է շատ ժամանակ պահանջում:

8. Ձեր կարծիքով, ի՞նչ է պակասում խմբագրություններին՝ տեղեկությունների ստուգումը առօրյա աշխատանքի մաս դարձնելու համար

9. Հիշո՞ւմ եք այնպիսի դեպք կամ դեպքեր, երբ ինքներդ եք ապատեղեկատվություն **սպառել** ու հավատացել դրան:

- ☐ Ի՞նչն է արժանահավատ դարձրել այդ տեղեկությունը ձեզ համար:
- ☐ Վերլուծե՞լ եք, թե ինչու եք հավատացել տեղեկությանը և ինչու չեք ստուգել դրա հավաստիությունը:

10. Հիշո՞ւմ եք դեպք, երբ առանց ստուգելու ինքներդ եք **տարածել** այնպիսի տեղեկություն, որը ճիշտ չի եղել:

- ☐ Ինչո՞ւ եք տարածել:
- ☐ Ի՞նչ եք արել, երբ պարզել եք իրականությունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

11. Խնդրում եմ ձեր դիմաց դրված թղթերի վրա [*հեռակա քննարկման դեպքում՝ Zoom-ի չատում*] գրել այն առցանց **հարթակների** ու **գործիքների** անունները, որոնք դուք օգտագործում եք տեղեկություններ ստուգելիս:

[Հավաքել պատասխանները և քննարկում ծավալել մի քանի հիմնական գործիքների մասին]

12. Ի՞նչ կարող եք ասել այս հարթակների ու գործիքների **արդյունավետության** մասին:

- ☐ Ո՞րն է դրանց **առավելությունը**:
- ☐ Ո՞րն է **պակասությունը**: Ի՞նչ կավելացնեիք, եթե հնարավորություն ունենայիք:

13. Ի՞նչ կասեք **օֆլայն** աղբյուրներից [*հարցման պատասխանից՝ «ոչ թվային բազաներից»*] օգտվելու մասին:

- ☐ Որո՞նք են **դժվարությունները**, օրինակ, արխիվների, ռեգիստրների, տարբեր հիմնարկների հետ աշխատանքում:
- ☐ Ի՞նչ օրինակներ կհիշեք:

14. Ձեր լրացրած հարցաթերթում նշված էին մի քանի **լուծումներ**, որոնք, հնարավոր է, նպաստեն տեղեկությունների ստուգման գործին հայաստանյան մեդիայում [հիշեցնել]: Ձեր կարծիքով, ո՞ր լուծումն է հրատապ, որի՞ն արժե տրամադրել ռեսուրսներն ու ժամանակը, կամ եթե դժվարանում եք առանձնացնել մեկը՝ որի՞ց սկսել:

☐ Ինչո՞ւ հենց այդ լուծումը:

☐ Եթե մասնակցել եք այս թեմայով **դասընթացների**, խնդրում եմ գնահատել դրանց արդյունավետությունը: Հատկապես ի՞նչն է, որ սկսել եք կիրառել այդ դասընթացներից հետո: Եթե չեք կիրառել գիտելիքը, ո՞րն է եղել դրա պատճառը:

15. Ունե՞ք եզրափակիչ մեկնաբանություն՝ այս քննարկման թեմայի մասին:

[Շնորհակալություն մասնակցության համար: Հետադարձ կապ]

Հավելված 3. Ֆոկուս-խմբային քննարկումների և հարցազրույցների մասնակիցների ցանկ

Անունը	Մասնագիտությունը	Գործունեության վայրը	Մասնակցությունը
Թագուհի	Լրագրող	Երևան	Ֆոկուս խումբ, 13.05.2022
Նատալի	Լրագրող	Երևան	Ֆոկուս խումբ, 13.05.2022
Աստղիկ	Ուսանող	Երևան	Ֆոկուս խումբ, 13.05.2022
Կարմեն	Լրագրող	Երևան	Ֆոկուս խումբ, 13.05.2022
Մարիամ	Լրագրող	Երևան	Ֆոկուս խումբ, 13.05.2022
Լուսինե	Լրագրող	Երևան	Ֆոկուս խումբ, 13.05.2022
Լիանա	Խմբագիր	Երևան	Ֆոկուս խումբ, 13.05.2022
Մարինա	Լրագրող	Լոռի	Ֆոկուս խումբ, 18.05.2022
Արմենուհի	Լրագրող, համակարգող	Շիրակ	Ֆոկուս խումբ, 18.05.2022
Լուսինե	Լրագրող	Լոռի	Ֆոկուս խումբ, 18.05.2022
Անի	Խմբագիր, լրագրող	Շիրակ	Ֆոկուս խումբ, 18.05.2022
Անժելա	Լրագրող	Արմավիր	Հարցազրույց, 16.06.2022
Հրանտ	Լրագրող, բլոգեր	Տավուշ	Հարցազրույց, 16.06.2022
Սուսաննա	Խմբագիր	Սյունիք	Հարցազրույց, 16.06.2022